USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

RESTART foundation

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2022

Սույն հետազոտությունն իրականացվել է «Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամի կողմից՝ Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

Նյութի բովանդակության պատասխանատուն «Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամը և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն» են, և պարտադիր չէ, որ այն արտացոլի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Հետազոտող՝ Ալբերտ Հայրապետյան, տնտեսագիտության թեկնածու

«Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամ
Երևան, Բայրոնի 8
Հեռախոս՝ 374 077 250545
Էլ. Փոստ՝ restartfoundationedu@gmail.com

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ 8

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 15

Ընտրանքի որոշում 16

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 18

Խախտման անձնագիր 1. Խաբեություն և գրագողություն 18

Խախտման անձնագիր 2. Ակադեմիական առաջադիմության սխալ գնահատում 25

Խախտման անձնագիր 3. Անհարկի միջամտություն պրոֆեսորադասախոսական կազմի անդամների աշխատանքի նշանակման, աշխատանքից ազատման և մասնագիտական առաջխաղացման վերաբերյալ որոշումների կայացման վրա 30

Խախտման անձնագիր 4. Բուհերի քաղաքականացում 34

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 40

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 41

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 44

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 47

Հավելված 1. Անանուն հարցման հարցաշար 47

Հավելված 2. Ֆոկուս-խմբային քննարկման հարցաշար 53

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն հետազոտությունն իրականացվել է «Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամի կողմից: Հետազոտության **նպատակն է** գնահատել Հայաստանի Հանրապետության (ՀՀ) բուհերում ակադեմիական բարեվարքության վիճակն ու պայմանները:

Հետազոտության հիմքում ընկած է "INTES" (integrity of national education systems) մեթոդաբանությունը: Այս մեթոդաբանությամբ առաջարկվում է համալիր մոտեցում, որը միտված է ակադեմիական բարեվարքության կանոնների խախտման համար բարենպաստ պայմաններ ստեղծող գործոնների և անձնական դրդապատճառների վերացմանը: Մեթոդաբանությունն օգնում է հասկանալու հիմնախնդրի բուն պատճառները և բարելավելու համակարգն այնպես, որ ոչ պատշաճ գործելաոճը դառնա անհնար և անիմաստ:

Հետազոտության առարկան ներառել է ակադեմիական բարեվարքության խախտումների չորս խումբ,

1. խաբեություն և գրագողություն.
2. ուսումնական առաջադիմության սխալ գնահատում.
3. պրոֆեսորադասախոսական կազմի նշանակման և աշխատանքից ազատման որոշումների վրա անհարկի ներգործություն.
4. բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի քաղաքականացում:

Հետազոտության **խնդիրներն էին.**

- բացահայտել ուսանողների շրջանում բարեվարքության և բարեվարքության խախտման նկատմամբ վերաբերմունքի հիմնական դրսևորումներն ու արժեքային կողմնորոշումները.
- բացահայտել բարձրագույն ուսումնական հաստատություններում ակադեմիական բարեվարքության խախտման վերը նշված չորս խմբի խախտումների տարածվածության վերաբերյալ ուսանողների ընկալումը, ինչպես նաև վերհանել դրանց նպաստող գործոնները և վերլուծել դրանց շարժառիթները.
- գնահատել բուհերում բարեվարքության ապահովման գործում ուսանողների և ուսանողական կառույցների իրական ներգրավվածության աստիճանն ու ազդեցությունը.
- ներկայացնել առաջարկություններ՝ խթանելու Հայաստանի բուհերում ակադեմիական բարեվարքությունը և դրանում ուսանողության ներգրավվածության արդյունավետությունը:

Գնահատումը հիմնված էր տվյալների հավաքման որակական և քանակական մեթոդների վրա՝ ներառելով.

- ՀՀ տարբեր բուհերի (ինչպես երևանյան, այնպես էլ՝ մարզային) 383 ուսանողների շրջանում անցկացված անանուն հարցումներ.
- ՀՀ 4 տարբեր քաղաքներում ուսանողների մասնակցությամբ իրականացված ֆոկուս խմբային քննարկումներ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ **եզրակացությունների՝**

- Ուսանողների ընկալմամբ խաբեբայությանն ու գրագողությանը նպաստող գործոններն են դասախոսների կողմից տրվող ոչ հստակ, իսկ երբեմն՝ անիրատեսական հանձնարարությունները, ուսանողների շրջանում գրագողության դեմ պայքարի մոտիվացիայի պակասը կամ բացակայության, դիպլոմային/կուրսային և անհատական աշխատանքների պատվերներ ընդունող կազմակերպությունների առկայությունը և, վերջապես, դասախոսների անհետևողականությունը, իսկ շարժառիթները՝ անհրաժեշտ գրականության բացակայությունը կամ պակասը, ժամանակի սղությունը, թեմայի ոչ պատշաճ մատուցումը.
- Ուսանողների ընկալմամբ անարդարացի/սխալ գնահատմանը նպաստող գործոններն են սովորույթի/ավանդույթի ուժով գնահատումը, վերահսկողության ու հաշվետվողականության պակասը, ինչպես նաև այլոց նկատմամբ դրսևորված ենթադրյալ անարդարացի գնահատման դեմ պայքարի ոչ բավարար պատրաստակամությունը, իսկ շարժառիթները՝ ֆավորիտիզմը և ուսանողների վարձավճարներից ունեցած կախվածությունը.
- Ուսանողների ընկալմամբ պրոֆեսորադասախոսական կազմի անդամների աշխատանքի նշանակման, աշխատանքից ազատման և մասնագիտական առաջխաղացման վերաբերյալ որոշումների կայացման վրա իրենք շոշափելի ազդեցություն չունեն, սակայն իրենց ձայնը լսելի է դառնում, երբ համախմբվում և դիրքորոշում են հայտնում: Հետազոտության մասնակցած ուսանողներն առհասարակ դասախոսների աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման և ծառայողական առաջխաղացման կարգերի առկայության կամ բացակայության մասին տեղյակ չեն.
- Ուսանողների ընկալմամբ բուհերի քաղաքականացվածությունը սույն հետազոտության շրջանակներում բարեվարքության խախտման չորս դրսևորումներից ամենաքիչ տարածվածն է: Քաղաքականացմանը նպաստում են կուսակցականացված ուսանողական խորհուրդները, որոնք ինքնցիայով շարունակում են անել այն, ինչ անում էին 2018 թվականի քաղաքական իրադարձություններից առաջ: Այդուհանդերձ, որոշակի կապ կա դասախոսի ծառայողական առաջխաղացման ու խրախուսման և վերջինիս քաղաքական հայացքների միջև:

Ստացված տվյալների վերլուծությունն իրականացվել է ըստ վերոնշյալ չորս խումբ խախտումների: Բարեվարքության խախտման յուրաքանչյուր խմբի համար կազմվել է առանձին «անձնագիր»:

Հետազոտության արդյունքում արված են **առաջարկություններ** ՀՀ բուհերին և ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (**ԿԳՄՍ)** նախարարությանը:

Առաջարկություններ ՀՀ բուհերին

1. **Խաբեություն և գրագողություն**

- Բուհերում «Մասնագիտական ներածություն» առարկայի շրջանակներում դասավանդել ակադեմիական գրագրության կանոնները և պահանջները, ներկայացնել գրագողության և խարդախության վտանգները.
- Սահմանել ակադեմիական գրագողության և խաբեբայության դեմ պայքարի ընթացակարգեր և դրանց համար կիրառվելիք պատասխանատվության միջոցներ՝ ընդհուպ մինչև բուհից հեռացում.
- Ստեղծել ակադեմիական էթիկայի կոմիտեներ.
- Ներդնել գրագողության դեմ պայքարի հավելված (Turn-it-in-ի օրինակով) կամ կազմակերպել ուսանողների ներկայացրած աշխատանքների ստուգում փակ գրախոսության (blind review) ձևաչափով.

2. **Ակադեմիական առաջադիմության սխալ գնահատում**

- Բուհերում մշակել առարկայի գնահատման հստակ չափանիշներ (rubric).
- Մասնատել առարկայի գնահատումը մի քանի մասերի, գնահատման մեթոդների շարքում դիտարկել անհատական և խմբային առաջադրանքների՝ էսսեների, իրավիճակային խնդիրների, հետազոտական աշխատանքների հանձնարարումը, որոնց համար՝ մշակել գնահատման կրեդիտային չափանիշներ.
- Բուհական քննասենյակներում ակադեմիական առաջընթացի գնահատումն իրականացնել մեկից ավել մասնագետների ներկայությամբ, այդ թվում՝ ապահովելով հրավիրյալ մասնագետի ներկայություն, վերջինիս ընտրությունը կատարելով համակարգչի միջոցով՝ պատահական ընտրության սկզբունքով.
- Ակադեմիական առաջընթացի գնահատման գործընթացում նեպոտիզմի և ֆավորիտիզմի երևույթները չեզոքացնելու նպատակով ներդնել քննող դասախոսների և հրավիրված մասնագետների կողմից շահերի բախման գրավոր կամ բանավոր հայտարարությունների գործիքը.

3. **Անհարկի միջամտություն պրոֆեսորադասախոսական կազմի անդամների աշխատանքի նշանակման, աշխատանքից ազատման և մասնագիտական առաջխաղացման վերաբերյալ որոշումների կայացման վրա**

- Բուհերում մշակել աշխատանքի ընդունման և պրոֆեսորադասախոսական թափուր հաստիքների տեղակալման հստակ չափորոշիչներ ու բարձրացնել գործընթացների թափանցիկությունը. աշխատանքի ընդունումը կազմակերպել բաց մրցույթային հիմունքներով և սահմանված չափորոշիչների կիրառմամբ, իսկ աշխատանքից ազատման որոշումների համար ապահովել պատշաճ հիմնավորվածության և որոշումների հրապարակայնություն.
- Բուհական անձնակազմի աշխատանքի խրախուսումը և ծառայողական առաջխաղացումը կազմակերպել չափելի հիմնական կատարողականի ցուցանիշների (KPI) հիման վրա.

Առաջարկություններ ՀՀ ԿԳՄՍ-ին

4. **Բուհերի քաղաքականացում**
   - Օրենսդրորեն սահմանափակել բուհերի կառավարման բարձրագույն օղակներում քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև՝ կուսակցությունների կառավարման ղեկավար և վերահսկողական մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց ներգրավվման հնարավորությունները.
   - Բուհերի ուսանողական խորհրուրդների ձևավորման գործընթացում սահմանափակել քաղաքական կողմնորոշում և կուսակցական պատկանելիություն ունեցող ուսանողների ներգրավումը.
   - Բուհերի կառավարման ու ուսանողական խորհուրդների անդամների, ինչպես նաև՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար սահմանել քաղաքական զսպվածության և չեզոքության պահանջներ ու սահմանափակումներ, դրանց կիրարկման ընթացակարգեր. դրանց չկատարման կամ խախտման համար նախատեսել վարչական և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Առաջարկվում է նաև վերոգրյալ բոլոր առաջարկությունների կյանքի կոչման գործում հնարավորության դեպքում ներառել նաև ուսանողներին՝ առավելագույնս հաշվի առնելով նաև վերջիններիս կարծիքներն ու ընկալումները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթության համակարգը կենսական նշանակություն ունի ոչ միայն անհատի զարգացման ու երկրի բարգավաճման, այլև մարդկության առաջընթացի ու զարգացման համար: Սակայն, ինչպես յուրաքանչյուր համակարգ, բարձրագույն կրթության ոլորտը ևս զերծ չէ թերություններից և ներհամակարգային քայքայիչ երևույթներից: Ակադեմիական բարեվարքության խախտումները, կարելի է դասել հենց այդպիսի երևույթների շարքին:

Սույն հետազոտության շրջանակներում փորձել ենք բացահայտել ակադեմիական բարեվարքության խախտման հետևյալ չորս դրսևորումների, վերջիններիս նպաստող գործոնների և շարժառիթների վերաբերյալ ուսանողների ընկալումները՝

1. խաբեություն և գրագողություն.
2. ուսումնական առաջադիմության սխալ գնահատում.
3. պրոֆեսորադասախոսական կազմի նշանակման և աշխատանքից ազատման որոշումների վրա անհարկի ներգործություն.
4. բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի քաղաքականացում:

Հետազոտության հիմնված է “INTES” (integrity of national education systems) մեթոդաբանության վրա, իսկ տեղեկատվական հիմքը՝ ուսանողների շրջանում անցկացված ֆոկուս խմբային քննարկումներն են և անանուն հարցումները: Վերլուծությունը իրականացվել է ոչ թե ըստ առանձին գործիքների՝ ֆոկուս խմբային քննարկման և հարցումների, այլ ըստ նշյալ չորս խնդիրների: Բարեվարքության խախտման յուրաքանչյուր խնդրի համար կազմվել է առանձին «անձնագիր»:

Հետազոտության նպատակը.

Հետազոտության **նպատակն է** գնահատել Հայաստանի Հանրապետության (ՀՀ) բուհերում ակադեմիական բարեվարքության վիճակն ու պայմանները:

Հետազոտության խնդիրներն հետևյալն են.

- բացահայտել ուսանողների շրջանում բարեվարքության և բարեվարքության խախտման նկատմամբ վերաբերմունքի հիմնական դրսևորումներն ու արժեքային կողմնորոշումները.
- բացահայտել բարձրագույն ուսումնական հաստատություններում ակադեմիական բարեվարքության խախտման վերը նշված չորս խմբի խախտումների տարածվածության վերաբերյալ ուսանողների ընկալումը, ինչպես նաև վերհանել դրանց նպաստող գործոնները և վերլուծել դրանց շարժառիթները.
- գնահատել բուհերում բարեվարքության ապահովման գործում ուսանողների և ուսանողական կառույցների իրական ներգրավվածության աստիճանն ու ազդեցությունը.
- ներկայացնել առաջարկություններ՝ խթանելու Հայաստանի բուհերում ակադեմիական բարեվարքությունը և դրանում ուսանողության ներգրավվածության արդյունավետությունը:

Հետազոտության վերջում հանդես ենք եկել կիրառական առաջարկություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Կրթությունը հանրային միջոցների ծախսման կարևորագույն ուղղություններից մեկն է, ինչն էլ ոլորտում ակադեմիական բարեվարքության խախտման դրսևորումների համար միանգամայն նպաստավոր պայմաններ է ստեղծում: 2007թ.-ի ՅՈՒՆԵՍԿՕ-ի զեկույցի համաձայն կրթական ոլորտի կոռուպցիան համընդհանուր և համամարդկային խնդիր է, սակայն այն առավել ակնառու դրսևորվում է հենց զարգացող երկրներում[1]: Ուստի, ամենևին պատահական չէ, որ ուսումնասիրված գրականությունը բացառապես հենց զարգացող երկրներին է վերաբերում:

Ակադեմիական բարեվարքության ընկալումների վերաբերյալ մի շարք հետազոտություններ են արվել: Սահմանումներից մեկի համաձայն ակադեմիական բարեվարքությունը ոլորտի բարոյական ու էթիկայի նորմերին ու կանոններին հետևելն է[2]: Բարեվարքությունը կարող է բնութագրվել նաև ավելի պաշտոնական լեզվով՝ որպես «հանրային վարչարարության հիմնարար սկզբունք (ՄԱԿ-ի խարտիայի 101-րդ հոդված), որը ենթադրում է հանրային կազմակերպությունների առօրյա աշխատանքում ընդունված արժեքների, սկզբունքների և նորմերի շարունակական կիրառում հանրությանը լավագույնս ծառայելու և հանրային շահերը պաշտպանելու համար»: Նշված արժեքները, սկզբունքները և նորմերը սահմանվում են օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով (կանոնակարգերով) և ձևավորում են այսպես կոչված «խաղի կանոնները» հանրային ծառայություններում՝ ընդհանրապես, և կրթության ոլորտում՝ մասնավորապես: Միասին դրանք կազմում են ինստիտուցիոնալ բարեվարքության նորմատիվ հիմքը[3]:

Ակադեմիական բարեվարքության խախտումներից մեկը գրագողությունն է, որ, ինչպես կոռուպցիան, նույնպես բազմաթիվ սահմանումներ ունի: Առավել տարածված սահմանումներից մեկի համաձայն գրագողությունը առանց պատշաճ ցիտման կամ որևէ կերպ աղբյուրը նշելու այլոց մտքերի կամ բառերի գողությունն է կամ սեփական անձին վերագրումը[4]:

Հաշվի առնելով ծավալային ու ժամանակային սահմանափակումները՝ որոշեցինք հիմնվել մի հոդվածի վրա, որն իր բնույթով արդեն իսկ գրականության ակնարկ է: Գոտադելոն Պաիմեսը և Վալվերդը ներկայացրել են ակադեմիական բարեվարքության խախտման դրսևորումների նկատմամբ դասախոսների վերաբերմունքը[5]: Այդ նպատակով վերջիններս հեղինակավոր Scopus և Web of Science շտեմարաններում փնտրել ու գտել են համապատասխան հոդվածները, որոնք հրապարակվել են 2000-2016թթ.-ների ընթացքում: Ընտրված ժամանակահատվածը պատահական չի ընտրված, քանի որ այն համընկել է համացանցի՝ ինչպե՛ս կենցաղում, այնպե՛ս էլ ակադեմիական ոլորտում զանգվածային օգտագործման

[1] Hallak, J., & Poisson, M. (2007). Corrupt schools, corrupt universities: What can be done?. Paris: International Institute for Education Planning.

[2] Sihombing, S. O. (2018). Youth perceptions toward corruption and integrity: Indonesian context. *Kasetsart Journal of Social Sciences*, *39*(2), p. 301.

[3] Միխայլո Միլովանովիչ, «Կոռուպցիայի դեմ պայքարը և բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթական ոլորտում», համահեղինակներ՝ Իվանա Սեներիկ (կրթության քաղաքականության հարցերով անկախ խորհրդատու), Մերի Ավետիսյան («Էդմոն Սաֆրա» էթիկայի կենտրոնի գիտաշխատող), Տատյանա Խավանսկա (կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով ավագ խորհրդատու), խորհրդատու՝ Յան Ութման, կենտրոնի խորհրդատվական խորհրդի նախագահ: «Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան» կազմակերպության պատվերով, էջ 33:

[4] Gottardello, D., Pàmies, M., & Valverde, M. (2017). Professors' perceptions of university students' plagiarism: A literature review. *BID: Textos universitaris de biblioteconomia i documentació*, *39*(diciembre), p. 1

[5] Նույն տեղում, էջ 2-4:

հետ: Հաշվի առնելով հետազոտության օբյեկտը, 116 հոդվածներից ուսումնասիրվել է 79-ը, որոնք առնչվել են թեմային: Հարկ ենք համարում ընդգծել, որ ուսումնասիրված հոդվածներում հեղինակները, թեպետ միևնույն թեման են ուսումնասիրել, սակայն մեկմեկու արված հղումները քիչ են, ուստի գրականության ամփոփումները եղել են ոչ թե կոնկրետ թեմայի կամ հետազոտական հարցի, այլ առավել լայն՝ տվյալ գիտակարգի վերաբերյալ: Այսպիսի ծավալուն հետազոտության արդյունքում բացահայտվել են մի շարք կարևոր հիմնախնդիրներ՝

1. Ակադեմիական հանրույթում չկա միանշանակ ընկալում թե ինչը կարելի է համարել ակադեմիական բարեվարքության խախտում:
2. Հումանիտար ոլորտը ներկայացնող դասախոսների մեծ մասի պատկերացմամբ գրագողությունը այլ հեղինակներից առանց համապատասխան հղման կամ ոչ պատշաճ վերաշարադրմամբ (paraphrasing) ամբողջական պարբերությունների ներառումն է տեքստի մեջ, մինչդեռ պատմության դասախոսները առավել մեղմ ու լիբերալ մոտեցումներ ունեն այս հարցում: Մյուս կողմից՝ իրավաբանության դասախոսների ընկալմամբ անգամ դասընկերոջ հետ անհատական աշխատանքի քննարկումն է գրագողության և, հետևաբար, նաև կոռուպցիայի դրսևորում:
3. Ավանդաբար արևելյան երկրների ակադեմիական հանրույթները առավել հանդուրժող վերաբերմունք ունեն գրագողության և ակադեմիական բարեվարքության այլ խախտումների նկատմամբ, քան արևմտյան երկրները ներկայացնող ակադեմիական հանրույթի ներկայացուցիչները:
4. Դասախոսները միակարծիք չեն այն հարցում, թե գրագողության համար պատժելիս արդյո՞ք անհրաժեշտ է դիտավորության հանգամանքը հաշվի առնել թե ոչ:
5. Չկան նաև համընդհանուր ընկալումներ գրագողության մոտիվների վերաբերյալ: Դասախոսների մեծ մասն այն կարծիքին է, որ գրագողության պատճառը ուսանողների կողմից ակադեմիական գրագրության ավանդույթների չիմացությունն է և մասնավորապես՝ հղումները պատշաճ կերպով դնելու անկարողությունը, մինչդեռ մեկ այլ մաս գտնում է, որ պատճառն այն է, որ ուսանողները առավել հաճախ նախընտրում են թեկուզ անարդարացի ձեռք բերված վերջնարդյունքը ուսումնական բուն գործընթացից և դրա արդյունքում նոր բան սովորելուց: Մոտիվների շարքին կարելի է դասել նաև ուսանողների ոչ ամբողջական դրույքով աշխատանք ունենալը, ծուլությունը, ոչ նախընտրելի մասնագիտությամբ սովորելը, կոնկրետ առարկան չկարևորելը և այլն[6]:

Նշյալից բացի՝ հոդվածը վեր է հանել նաև մեկ այլ կարևոր խնդիր՝ դասախոսները ոչ միշտ են բուհի վերադաս մարմիններին կամ հատուկ այդ նպատակով ձևավորված էթիկայի հանձնաժողովներին ներկայացնում ակադեմիական բարեվարքության խախտման հետ կապված խնդիրները: Պատճառները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ էգոիստական և ալտրուիստական: Առաջինի էությունն այն է, որ վերադաս մարմինների հետ խնդրի քննարկումը և տարատեսակ լսումների մասնակցելը խլում է դասախոսի աշխատաժամանակի մի մասը, իսկ երբեմն, նույնիսկ՝ զգալի մասը[7], մինչդեռ դասախոսների մի մասը, որոնց մոտեցումը կարելի է պայմանականորեն ալտրուիստական համարել,

[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում:

պարզապես չի ցանկանում լրացուցիչ խնդիրներ ստեղծել ուսանողների համար՝ վտանգելով վերջիններիս ուսման շարունակականությունը տվյալ համալսարանում:

Գրագողության վերաբերյալ ուսումնասիրվել են նաև ուսանողների ընկալումները, ընդ որում երկրների մշակութային առանձնահատկությունների կոնտեքստում: Հետազոտությունը հիմնված է մշակույթների դասակարգման Գիրտ Հոֆսթիդի հանրահայտ մոտեցման վրա[8]: Մասնավորապես՝ Հոֆսթիդը մշակույթները բաժանել է ըստ հետևյալ դասակարգման՝ 1. հեռավորություն իշխանությունից, 2. արական/իգական, 3. անձնակենտրոն/սոցիոկենտրոն, 4. անորոշությունից խուսանավելու աստիճան և 5. կողմնորոշում դեպի երկարաժամկետ/կարճաժամկետ հեռանկարներ: Եթե հակիրճ, ապա առաջին դասակարգիչը վերաբերում է երկրներում կամ կազմակերպությունների ներսում նվազ հզոր սուբյեկտների մասնակցությանը որոշումների կայացման գործընթացին և վերջիններիս կողմից «վերևների» և «ներքևների» միջև իշխանության բաժանման արդարացիության ընկալմանը, երկրորդը՝ թե որքանով է հասարակությունը մեծ տեղ տալիս հաջողությանն ու մրցակցությանը (արական) և որքանով՝ այլոց մասին հոգ տանելուն և կյանքի որակին (իգական), երրորդը՝ հասարակությունից՝ անհատի ունեցած կախվածության աստիճանին, չորրորդը՝ հասարակության կողմից ապագայի անորոշությունների վերաբերյալ ընկալումներին և, վերջապես, հինգերորդը՝ ապագայի՝ ներկայի համեմատ առավել կամ նվազ լավ լինելու վերաբերյալ հասարակության ընկալմանը: Հետազոտությունը անցկացվել է Լեհաստանի, Չեխիայի, Ռումինիայի և Միացյալ Թագավորության (ՄԹ) ուսանողների շրջանում[9]: Արդյունքները իրոք ուշագրավ էին: ՄԹ-ն, որն առավել անհատակենտրոն հասարակություն է, քան Արևելյան Եվրոպայի երկրները, ուսանողները գտնում էին, որ գրագողության դեմ պայքարը, նախ և առաջ, անհատի պատասխանատվությունն է: Մյուս կողմից այն ուսանողները, որոնք ապրում են արևելաեվրոպական հասարակություններում, որտեղ առավել մեծ է զգուշությունը անորոշությունից առավել շատ կարիք ունեին բարեվարքության կանոնների մանրակրկիտ ներկայացման: Հետազոտության հիմնական արդյունքները խտացված և ներկայացված են աղյուսակ 1-ում[10]:

[8] Hofstede insights, compare countries, available at https://www.hofstede-insights.com/product/compare-countries/

[9] Mahmud, S., Bretag, T., & Foltýnek, T. (2019). Students' perceptions of plagiarism policy in higher education: A comparison of the United Kingdom, Czechia, Poland and Romania. *Journal of Academic Ethics*, *17*(3), 271-289.

[10] Նույն տեղում:

Աղյուսակ 1. Միացյալ Թագավորության, Լեհաստանի, Ռումինիայի և Չեխիայի հարցված ուսանողների ընկալումները ակադեմիական բարեվարքությանը վերաբերող հարցերում (նշված է պնդմանը համաձայն ուսանողների %-ը)[11]:

Պնդում	ՄԹ	Չեխիա	Լեհաստան	Ռումինիա
Այն հաստատությունը, որտեղ ես սովորում եմ ունի գրագողության դեպքերի վերաբերյալ հստակ կանոնակարգեր	93.3	71.3	43	40.9
Գրագողության դեմ առկա կարգավորումներն ու ընթացակարգերը ուսանողների համար հասանելի են	83.9	52	24.4	45.1
Ես գիտեմ, թե գրագողության տարբեր տեսակների համար ինչպիսի պատժամիջոցներ են կիրառվում	60.8	70.7	31.1	50.3
Ես ակադեմիական գրագրության և գրագողությունից խուսափելու նպատակով հատուկ թրեյնինգներ եմ անցնել	77.7	26.6	15.4	40
Ես կցանկանայի գրագողությունից խուսափելու ու ակադեմիական բարեվարքության վերաբերյալ ավել շատ թրեյնինգներ անցնել	58.2	44.4	52.7	86.7
Ես հասկանում եմ հեղինակային իրավունքների, մտավոր սեփականության ու գրագողության միջև առկա կապը	72.5	85.6	64.3	80.4
Ես հավատում եմ, որ բոլոր դասախոսները գրագողության նույնատիպ դեպքերի հայտնաբերման դեպքում միանման միջոցառումներ են ձեռնարկում	59.7	30.7	27	47.8
Ես հավատում ե, որ գրագողության դեպքերին առնչվելիս դասախոսները շարժվում են ըստ կանոնակարգերի	72.7	55.9	27.2	56.3

Հավելենք, որ ուսանողների շրջանում անցկացված ավստրալիական մի հետազոտության համաձայն ակադեմիական բարեվարքության պահպանման և տարատեսակ գրագողություններից խուսանավելու համար կարևոր են հետևյալ երեք փոփոխականները՝ հասանելիությունը (access), աջակցություն (support) և մանրամասներ (details): Առաջինը վերաբերում է բարեվարքությանն առնչվող կարգավորումների հասանելիությանը, երկրորդը՝ կարգավորումների պատշաճ մատուցմանն ու արդյունավետ կիրարկմանը, իսկ երրորդը՝ կարգավորումներում արարքի և հնարավոր պատժի մանրակրկիտ, սակայն ոչ անհարկի երկար նկարագրությանը[12]:

Ուսանողների ու երիտասարդների շրջանում ակադեմիական բարեվարքության ընկալման վերաբերյալ հետազոտություններ են արվել նաև առանձին երկրների կտրվածքով: Այս

[11] Նույն տեղում:
[12] Bretag, T., Mahmud, S., Wallace, M., Walker, R., McGowan, U., East, J., ... & James, C. (2014). 'Teach us how to do it properly!'An Australian academic integrity student survey. *Studies in higher education*, *39*(7), 1150-1169.

առումով ուշագրավ հետազոտություններից է Ինդոնեզիայի երիտասարդների շրջանում իրականացված հետազոտությունը[13]: Նախ՝ նշենք, որ ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության կողմից հրապարակվող կոռուպցիայի ընկալման համաթվի 2020թ.-ին Ինդոնեզիան 179 երկրների միջև 102-րդ տեղում է, ինչը վկայում է այն մասին, որ փորձագետների շրջանում առկա է համոզմունքն առ այն, որ կոռուպցիան երկրում լայնորեն տարածված է: Ավելին, երկրին նախագահը 2015թ.-ի ուղերձում հայտարարել է, որ կոռուպցիոն հանցագործությունների համար դատապարտվել են 9 նախարարներ, 19 նահանգապետներ, 300 քաղաքապետեր և կենտրոնական բանկի երկու կառավարիչներ[14]: Հետազոտությանը մասնակցած 16-21 տարեկան 500 ինդոնեզցի երիտասարդներին, բաժանվել էին հատուկ հարցաթերթիկներ և խնդրել «բարեվարքության» եզրույթի իրենց սեփական սահմանումը: Հետազոտությունը, սակայն, պարզել է, որ հարցմանը մասնակցած երիտասարդների կեսը չի կարողացել սահմանել «բարեվարքություն» եզրույթը: Մեկ այլ հետազոտություն է անցկացվել Պակիստանի ուսանողների շրջանում: Վերջիններիս խնդրել են նշել իրենց ընկալմամբ հանրային հաստատություններում կոռուպցիայի ու բարեվարքության խախտման պատճառները: Հարցված ուսանողների 31%-ը նշել է, որ հիմնական պատճառը հաշվետվողականության պակասը, 20%-ը՝ ցածր աշխատավարձերն ու 13%-ը՝ հանրային հաստատությունների քաղաքականացվածությունը, իսկ մնացած մասը՝ այլ պատճառներ են նշել: Ընդգծենք, որ հարցմանը մասնակցած ուսանողների 52%-ը գտնում է, որ կոռուպցիան Պակիստանի հանրային հաստատություններում լուրջ խնդիր է, իսկ 41%-ի համար՝ այն համար մեկ խնդիրն է իր լրջությամբ: Ըստ պակիստանցի ուսանողների խնդրի լուծման ամենաարդյունավետ ճանապարհը հակակոռուպցիոն ռազմավարությունների ներառումն է բուհական ուսումնական ծրագրերում: Վերջիններիս պնդմամբ հակակոռուպցիոն պայքարը հենց բուհերից է պետք սկսել և դա պետք է անել ուսանողներին կրթելով:[15]

Անհամեմատ ավելի բարդ մեթոդաբանությամբ ուշագրավ հետազոտություն է իրականացվել Ռումինիայում, որտեղ, ըստ հեղինակների, կոռուպցիոն սկանդալներն ու ակադեմիական բարեվարքության խախտման դրսևորումները դարձել են բուհական համակարգի անբաժանելի մասը: Այս հետազոտության մեջ հարցման մասնակիցները ոչ թե ուսանողներն էին, այլ բուհերը: Հարցաշարը բաղկացած էր 4 մասից, և յուրաքանչյուր մասի պատասխանների հիման վրա հարցված բուհերը ստանում էին միավորներ: Նշենք, որ ոչ բոլոր բուհերն են ցանկություն հայտնել մասնակցել հետազոտության: Ավելին, բուհերը դժկամությամբ են իրենց պաշտոնական կայքերում տեղադրել փաստաթղթեր, ինչպես նաև բուհական ղեկավարության եկամուտների հայտարարագրերը, որոնք Ռումինիայում օրենքի պահանջ են: Հարցաշարի առաջին մասը (ընդհանուր միավորի 30%-ը) վերաբերում է գործունեության թափանցիկությանը, երկրորդը (20%)՝ ակադեմիական բարեվարքությանը, երրորդը (35%)՝ բուհերում աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու պրակտիկային և, վերջապես, չորրորդ մասը (15%)՝ ֆինանսական գործունեության կառավարմանը: Միավորներ շնորհելուց բացի հետազոտողները նաև միավորներ են հանել այն բուհերից, որոնք ներգրավված են եղել կոռուպցիոն դատական գործերում, ապացուցվել է, որ դիպլոմներ են վաճառել, խտրական վերաբերմունք են դրսևորել ուսանողների ու

[13]Sihombing, S. O. (2018). Youth perceptions toward corruption and integrity: Indonesian context. *Kasetsart Journal of Social Sciences*, *39*(2)

[14] Նույն տեղում, էջ 300:

[15] Hussain, Fiaz, and Adnan Riaz Fiaz Hussain Adnan Riaz. "Corruption in the public organizations of Pakistan: Perceptual views of university students." The Journal of Commerce 4, no. 1 (2012): pp. 66-67.

աշխատակիցների նկատմամբ և այլն[16]: Ստորև ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները՝

1. Թեպետ բուհերը հիմնականում կատարել են թափուր աշխատատեղերը հրապարակելու մասին իրենց կանոնադրական պարտավորությունները, այնուամենայնիվ թափուր աշխատատեղերի մեծ մասի պարագայում եղել է սոսկ մեկ դիմում, ինչը կասկածներ է առաջացնում հավանական նեպոտիզմի վերաբերյալ:
2. Հետազոտողների կողմից վարկանիշավորումը հանգեցրել է ռեկորդային կարճ ժամանակահատվածում համալսարանների կայքերի թարմացմանն ու փաստաթղթերով ու այլ օգտակար տեղեկություններով հագեցմանը:
3. Ռումինական բուհերի մեծ մասը չունեն գրագողությունը ստուգող հավելվածներ: Ուսանողները արտագրում են համացանցից, կամ էլ ակադեմիական աշխատանքների կատարումը այլ անձանց պատվիրում՝ վերջիններիս դրա դիմաց վճարելով:
4. Բուհերի 95%-ում մեծ թիվ են կազմում այնպիսի դեպքերը, երբ միևնույն ընտանիքի 2 կամ ավելի անդամներ աշխատում են տվյալ բուհում: Օրինակ՝ 45 հոգուց բաղկացած ամբիոններից մեկում աշխատում էին 8 զույգեր (ամուսին ու կին) և հինգ հայր ու որդի:
5. Ուսանողների մասնակցությունը բուհերի կառավարմանը սոսկ ձևական բնույթ է կրում: Որոշ դեպքերում ռեկտորները իրենց ժամկետի ավարտին սենատի միջոցով փոխում են կանոնադրությունը՝ ավելացնելով բուհի նախագահի հաստիք, որին պետք է ենթարկվի նոր ռեկտորը և իրենց էլ այդ նույն սենատների օժանդակությամբ դառնում են նորընտիր նախագահներ:
6. Դրական կապ է արձանագրվել վարձատրության և ակադեմիական բարեվարքության կանոնների պահպանման միջև:
7. Որևէ կապ չի բացահայտվել բուհի երկարատև ավանդույթների ու ակադեմիական բարեվարքության կանոնների պահպանման միջև:
8. Ակադեմիական բարեվարքության խախտման դեպքերի պատճառներից մեկը բուհերի ինքնավարության կամայական սահմանում է, որը չի նախատեսում հաշվետվողականության մեխանիզմներ, ինչպես նաև սենատներում արտաքին շահառուների մասնակցություն[17]:

Հայաստանյան իրականության մասին ևս իրականացվել է չափազանց հետաքրքիր վերլուծություն «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության պատվերով: Միխայլո Միլովանովիչի և այլոց համահեղինակությամբ «INTES» մեթոդաբանության հիման վրա ուսումնասիրվել է ՀՀ դպրոցներում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում արատավոր երևույթների դրսևորումները[18]: «INTES» (Integrity of Education Systems – բարեվարքությունը կրթական համակարգերում) մեթոդաբանությունը մշակվել է 2010 թվականին Միլովանովիչի կողմից Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) համար՝ «Բաց

[16] Mungiu-Pippidi, A., & Dusu, A. E. (2011). Civil society and control of corruption: Assessing governance of Romanian public universities. International Journal of Educational Development, 31(5), 532-546.
[17] Նույն տեղում, 537-539:
[18] Միխայլո Միլովանովիչ, «Կոռուպցիայի դեմ պայքարը և բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթական ոլորտում», համահեղինակներ՝ Իվանա Սեներիկ (կրթության քաղաքականության հարցերով անկախ խորհրդատու), Մերի Ավետիսյան («Էդմոն Սաֆրա» էթիկայի կենտրոնի գիտաշխատող), Տատյանա Խավանսկա (կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով ավագ խորհրդատու), խորհրդատու՝ Յան Ութման, կենտրոնի խորհրդատվական խորհրդի նախագահ: «Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան» կազմակերպության պատվերով:

հասարակության հիմնադրամների» ֆինանսական օժանդակությամբ: Այն առավել մանրամասն ներկայացված է սույն հետազոտության «մեթոդաբանություն» բաժնում: Մասնավորապես, հետազոտողի կողմից ուսումնասիրվել են բուհերին վերաբերող հետևյալ հիմնախնդիրները՝

1. Խաբեություն և գրագողություն.
2. Ուսումնական առաջադիմության սխալ գնահատում.
3. Պրոֆեսորադասախոսական կազմի նշանակման և աշխատանքից ազատման որոշումների վրա անհարկի ներգործություն.
4. Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի քաղաքականացում:

Ինչպես արդեն նշեցինք հետազոտությունն իրականացվել է «INTES» մեթոդաբանության վրա, որը նախատեսում է համապարփակ մոտեցում: Յուրաքանչյուր խախտում դիտարկվում է ընդհանուր համատեքստում՝ որպես կրթական համակարգի այս կամ այն մակարդակում սկիզբ առած և ներհամակարգային կամ ավելի լայն տիրույթի մի շարք գործոններով պայմանավորված որևէ գործընթացի հետևանք, որը դրսևորվում է անբարեխիղճ և/կամ անազնիվ վարքագծով: Պարզելու համար, թե ինչ է կատարվում կոռուպցիոն գործընթացի այս հիմնական փուլերում, «INTES»-ը վերլուծում է կոռուպցիոն բնույթի ամեն մի իրավախախտում ավելի լայն համատեքստում՝ բարեվարքության տեսանկյունից:

Վերլուծությունն իրականացնելիս բարձրացվում են հետևյալ հարցերը՝

1. Ի՞նչ իրավախախտում է կատարվել:
2. Ինչպե՞ս է այն կատարվել:
3. Ինչո՞ւ է այն կատարվել[19]:

Նշյալ հետազոտությունը ունի համապարփակ բնույթ, որտեղ ոչ միայն նկարագրված են ՀՀ բուհական համակարգում առկա թերությունները, այլ նաև վեր են հանված պատճառները, վերլուծված են նպաստող գործոնները և հայտնաբերված են խախտումները: Հետազոտության վերջում հեղինակները հանդես են եկել օգտակար առաջարկներով:

«INTES» մեթոդաբանությունը հիրավի օգտակար է նաև սույն հետազոտության մեջ դրված խնդիրների լուծման համար, ուստի սույն հետազոտությունը նույնպես այդ մեթոդաբանությամբ կիրականացվի:

Եվ վերջապես, հաշվի առնելով սույն հետազոտության շրջանակներում ուսումնասերով բարեվարքության խախտման չորրորդ դրսևորումը՝ անարդարացի գնահատումները, ուսումնասիրել ենք նաև վերջինիս վերաբերյալ առկա ակադեմիական գրականությունը: Չոդհուին, ով վերլուծել է անարդարացի գնահատման և աշխատաշուկայում աշխատանքի անցնելու հնարավորությունների միջև կապը նկատել է, որ թեմայի վերաբերյալ առկա գրականությունը սակավ է: Հեղինակի պնդմամբ, երկարաժամկետ հեռանկարում անարդարացիորեն բարձր գնահատումը ազդում է տվյալ կրթական հաստատության հեղինակության վրա և գործատուները հաճախ կողմնակալ են վերաբերում այդ

[19] Նույն տեղում, էջ 30-31:

հաստատությունների նույնիսկ լավ առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների[20]: Վերջինս գտնում է, որ անցանկալի է ուսումնական ստորաբաժանումների ֆինանսավորումը կապել ուսանողների գնահատականների հետ: Այն պետք է կապվի այլ ուսանողների ընդունելության ցուցանիշների հետ[21]: Գնահատականների անարդարացիորեն բարձր լինելու և աշխատանքի անցնելու միջև կապը ուսումնասիրել են նաև Նորդինը և այլք: Վերջիններիս եկել է այն եզրահանգման, որ անարդարացիորեն բարձր գնահատականները իրենց ազդեցությունն են ունենում հատկապես ցածր կարողությունների տեր կանանց աշխատանքի անցնելու հեռանկարների վրա[22]:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գնահատման համար հիմք են ծառայել «INTES» մեթոդաբանությամբ իրականացված, 2016 թ. հետազոտության արդյունքները: Այս մեթոդաբանությամբ առաջարկվում է համալիր մոտեցում, որը միտված ակադեմիական բարեվարքության կանոնների խախտման համար բարենպաստ պայմաններ ստեղծող գործոնների և անձնական դրդապատճառների վերացմանը: Մեթոդաբանությունն օգնում է հասկանալ հիմնախնդրի բուն պատճառները և բարելավելու համակարգն այնպես, որ ոչ պատշաճ գործելաոճը դառնա անհնար և անիմաստ[23]:

Նշյալ հետազոտությունը բարձրագույն կրթության ոլորտում առանձնացրել է բարեվարքության կանոնների խախտման 4 ուղղություն՝ վերլուծելով յուրաքանչյուր խախտումը հնարավոր դարձնող գործոնները և շարժառիթները.

1. խաբեություն և գրագողություն,
2. ակադեմիական առաջադիմության գնահատման արդարացիության ընկալումը
3. ուսանողների վերաբերմունքը պրոֆեսորադասախոսական կազմի անդամների աշխատանքի նշանակման, աշխատանքից ազատման և մասնագիտական առաջխաղացման գործընթացի արդարացիության վերաբերյալ
4. բարձրագույն կրթության ոլորտի քաղաքականացում:

Սույն հետազոտության խնդիրն է՝

- բացահայտել ուսանողների շրջանում բարեվարքության և բարեվարքության խախտման նկատմամբ վերաբերմունքի հիմնական դրսևորումներն ու արժեքային կողմնորոշումները.
- բացահայտել բարձրագույն ուսումնական հաստատություններում ակադեմիական բարեվարքության խախտման վերը նշված չորս դրսևորումների տարածվածության վերաբերյալ ուսանողների ընկալումը, ինչպես նաև վերհանել դրանց նպաստող գործոնները և վերլուծել դրանց շարժառիթները.

[20] Chowdhury, F. (2018). Grade Inflation: Causes, Consequences and Cure. Journal of Education and Learning, 7(6), 86-92.
[21] Նույն տեղում, էջ 89:
[22] Nordin, M., Heckley, G., & Gerdtham, U. (2019). The impact of grade inflation on higher education enrolment and earnings. Economics of Education Review, 73.
[23] Open Society Foundations Armenia, Strengthening integrity and fighting corruption in education: Armenia, 2016 http://www.osf.am/wp-content/uploads/2017/01/Integrity-Report_ENG_PUBLISHED_16.01.2017.pdf

- գնահատել բուհերում բարեվարքության ապահովման գործում ուսանողների և ուսանողական կառույցների իրական ներգրավվածության աստիճանն ու ազդեցությունը.
- ներկայացնել առաջարկություններ՝ խթանելու Հայաստանի բուհերում ակադեմիական բարեվարքությունը և դրանում ուսանողության ներգրավվածության արդյունավետությունը:

Հետազոտությունը հիմնված է, ինչպես քանակական, այնպես էլ որակական մեթոդների վրա: Մասնավորապես անանուն հարցումների միջոցով փորձել ենք քանակական գնահատական տալ ակադեմիական բարեվարքության վերոգրյալ խախտումների վերաբերյալ ուսանողների ընկալումներին, ինչն էլ համադրվել է ուսանողների հետ անցկացված ֆոկուս խմբային քննարկման վերլուծության տվյալների հետ: Հավելենք նաև, որ առաջարկություններն անելիս հաշվի ենք առել նաև անանուն հարցման վերջին երկու հարցին ուսանողների տրված պատասխանները: Այդ պատասխանների առանձին վերլուծությունը չենք ներկայացնում, քանի որ ուսանողների գերակշիռ մեծամասնությունը նշել է, որ դժվարանում է պատասխանել, իսկ որոշ ուսանողներ էլ նույնը գրել են ռուսերենով:

Ընտրանքի որոշում

Ըստ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ներկայացրած տվյալների ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում 2020-2021թթ.-ներին ուսանել է 69987 ուսանող: Ընտրանքի հաշվարկը խարսխվում է նշյալ թվի վրա: Մասնավորապես, 95% վստահության մակարդակով (confidence level) և 5% վստահության միջակայքով (confidence interval) հարցում անելու համար անհրաժեշտ է 383 հարցաթերթիկ:[24] Հասարակական և հումանիտար գիտություններում հետազոտողները հաճախ հենց նշյալ մակարդակն ու միջակայքն են որպես հիմք ընդունում: Եթե հարցման մասնակիցների ենթադրենք 10%-ը նշել է, որ ունի ասպիրանտական կրթություն, ապա 95% վստահության մակարդակը և 5% վստահության միջավայրը հիմք ընդունելով կարելի է փաստել, որ եթե հարցումը իրականացվեր բոլոր 69987 ուսանողների շրջանում[25], ապա 95% հավանականությամբ հարցվածների 5-15%-ը կնշեր ասպիրանտական կրթության առկայության վերաբերյալ:

Միաժամանակ նշենք, որ հարցումն իրականացնելիս ձգտել ենք լինել ներառական՝ ընդգրկելով թե՛ պետական, թե՛ մասնավոր բուհերին, ինչպես երևանյան այնպես էլ մարզային բուհերին՝ հարցումն իրականացնելով ինչպես բնագիտական, այնպես էլ հումանիտար կրթություն ստացող ուսանողների շրջանում: Մասնավոր բուհերից հարցումն իրականացվել է Երևանի Հայբուսակ համալսարանի և Հյուսիսային համալսարանի ուսանողների շրջանում: Միաժամանակ, ներառականության սկզբունքը պահպանելով հարցումն իրականացվել է ինչպես մի շարք մասնագիտություններով կրթական ծառայություններ մատուցող մայր բուհի՝ Երևանի պետական համալսարանի, այնպես էլ կոնկրետ մասնագիտական կրթական ծառայություններ մատուցող բուհերի՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանողների

[24] Մանրամասների համար տե՛ս https://www.surveysystem.com/sscalc.htm?fbclid=IwAR3SnIg8_Mjp_tnunF4jx8y5AJjfJiwIGaz5vzKF45bxk46n2z5kZLvVqXU

[25] ՀՀ Վիճակագրության պետական կոմիտե, Սոցիալ-ժողովրդագրական հատված, 5.17. Բարձրագույն կրթությունը 2019/2020ուսումնական տարում, https://armstat.am/file/article/sv_03_20a_5170.pdf

շրջանում: Մարզային բուհերից հարցումն անցկացվել է Շիրակի պետական համալսարանի և Վանաձորի պետական համալսարանի ուսանողների միջև: Ստորև աղյուսակում ներկայացված են հետազոտության շրջանակներում նշված բուհերը, վերջիններիս ուսանողների թվաքանակը, ինչպես նաև այդ բուհերում հարցված ուսանողների թիվը:

Աղյուսակ 2. Հետազոտության շրջանակներում հարցված ուսանողների թիվն՝ ըստ բուհերի

Բուհ	Սովորող ուսանողների թիվ	Հարցված ուսանողների թիվ
ԵՊՀ[26]	14,258	147
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ[27]	1,300	14
ՀՊՏՀ[28]	6,046	62
ՀԱՊՀ Երևան[29]	5,585	57
ՀԱՊՀ Վանաձոր[30]	379	4
Վանաձորի պետական համալսարան[31]	1,728	18
Հյուսիսային համալսարան (2017-2018)[32]	2,958	30
ՇՊՀ[33]	2,344	24
Երևանի «Հայբուսակ» համալսարան[34]	2700	27

Հարցաթերթիկները բաշխվել են ըստ ուսումնասիրված բոլոր բուհերի ուսանողների ընդհանուր թվաքանակի մեջ տվյալ բուհի ունեցած ուսանողների տեսակարար կշռի: Այս պարագայում ընտրանքի հաշվարկի վերոգրյալ սկզբունքը չի պահպանվել, քանի որ հետազոտության նպատակը ոչ թե առանձին բուհերի ուսանողների կարծիքների ու տեղային առանձնահատկությունների ուսումնասիրություն է, այլ ՀՀ բուհերի ուսանողների շրջանում առկա ընկալումների ու տրամադրությունների վերհանումը: Ինչ վերաբերում է առանձին բուհերի տեղական առանձնահատկությունների վերլուծությանը, ապա այդ բացը փորձել ենք լրացնել որակական հետազոտական գործիքների կիրառմամբ:

[26] ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար, Երևանի պետական համալսարանի գործունեությունը 2019/2020 ուսումնական տարում Երևան 2020, http://documentation.ysu.am/wp-content/uploads/2021/09/Rektori_zekuyts_2020.pdf

[27] Նույն տեղում:

[28] ՀՊՏՀ 2020թ.-ի գործունեության հաշվետվություն, https://asue.am/upload/files/reports/report-2020.pdf

[29] Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի 2019/2020թթ. գործունեության հաշվետվություն, https://polytech.am/shared-files/37671/2019-2020%D5%A9%D5%A9%E2%80%A4-%D5%80%D4%B1%D5%8A%D5%80-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf

[30] Նույն տեղում:

[31] Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, 2020թ.-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ, https://old.vsu.am/xar@/%D5%8E%D5%8A%D5%80-%D4%B3%D4%B1%D5%91-2020%20%D5%A9-----21.04.21.pdf

[32] Հյուսիսային համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Նաիրուհի Սարգսյան, Հյուսիսային համալսարանի 2017-2018 ուստարվա գործունեության հաշվետվություն, https://northern.am/images/HASHVETVUTYUNNER/PROREKTOR--17-18.pdf

[33] Շիրակի պետական համալսարան, Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի 2019-2020 ուստարվա գործունեության հաշվետվություն, http://shsu.am/media/quality/vorak-hashvetvutyun-2019-2020.pdf

[34] Որակի էստոնական գործակալություն, Երևանի Հայբուսակ համալսարանի համար հաշվետվություն, http://www.anqa.am/media/3179/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A2%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%AF-%D6%83%D5%B8%D6%80%D5%B1%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81-2019.pdf

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Խախտման անձնագիր 1. Խաբեություն և գրագողություն

Ա. Ուսանողների ընկալմամբ խախտումը հնարավոր դարձնող գործոնները
• Ոչ պատշաճ հսկողություն և հետևողականություն դասախոսների կողմից • Դասախոսների կողմից տրվող ոչ հստակ, իսկ երբեմն՝ անիրատեսական հանձնարարություններ • Դիպլոմային/կուրսային և անհատական աշխատանքների պատվերներ ընդունող կազմակերպությունների առկայություն • Ուսանողների շրջանում գրագողության դեմ ակտիվ պայքարի ցանկության բացակայությունը
Բ. Ուսանողների ընկալմամբ բարեվարքության խախտման շարժառիթները
• Անհրաժեշտ գրականության պակաս կամ բացակայություն • Ժամանակի սղություն • Թեմայի բարդություն և ոչ պատշաճ մատուցում
Գ. Առաջարկություններ
• Բուհերում «Մասնագիտական ներածություն» առարկայի շրջանակներում դասավանդել ակադեմիական գրագրության կանոնները և պահանջները, ներկայացնել գրագողության և խարդախության վտանգները. • Սահմանել ակադեմիական գրագողության և խաբեբայության դեմ պայքարի ընթացակարգեր և դրանց համար կիրառվելիք պատասխանատվության միջոցներ՝ ընդհուպ մինչև բուհից հեռացում. • Ստեղծել ակադեմիական էթիկայի կոմիտեներ. • Ներդնել գրագողության դեմ պայքարի հավելված (Turn-it-in-ի օրինակով) կամ կազմակերպել ուսանողների ներկայացրած աշխատանքների ստուգում փակ գրախոսության (blind review) ձևաչափով.

Առկա իրավիճակը

Ինչպես արդեն նշեցինք ուսանողների կողմից ուսանողների ընկալումները չափվել են երկու միմյանց փոխլրացնող գործիքների՝հարցման արդյունքները և ՀՀ չորս քաղաքներում ֆոկուս խմբային քննարկումների միջոցով: Ֆոկուս խմբային քննարկումների հետ հարցման արդյունքների համադրումը կարևոր է հատկապես այն համատեքստում, որ ֆոկուս խմբի մասնակիցներից և ոչ ոք չի ընդունել կամ հաստատել իր կողմից ակադեմիական բարեվարքության խախտման փաստ, մինչդեռ անանուն հարցումների ժամանակ ուսանողների մի մասը ընդունել է, որ իրենք նույնպես ակադեմիական բարեվարքության խախտումներից զերծ չեն մնացել: Այլ կերպ ասած՝ ակադեմիական բարեվարքության խախտումը ներկայացվել է որպես այլոց կողմից կատարված խախտում: Պատկերը առավել ակնառու է ստորև զետեղված գծապատկերները վերլուծելիս:

Գծապատկեր 1. Ուսանողները կիսվում են ակադեմիական բարեվարքության խախտման վերաբերյալ սեփական փորձով:



Գծապատկերներ 1-ից ակնհայտ է դառնում, որ նույնիսկ անանուն հարցման ժամանակ ուսանողների ավելի քան երեք քառորդը նշել է, որ ձեռնպահ է մնացել ինչպես արդեն իսկ արված աշխատանքները ներկայացնելուց, այնպես էլ աշխատանքը այլոց պատվիրակելուց: Մինչդեռ, նույն ուսանողների կեսի ընկալմամբ իրենց բուհերում կան դիպլոմային, կուրսային և անհատական աշխատանքներ ձեռք բերելու ավանդույթներ: Իրավիճակը ուշագրավ է՝ հաշվի առնելով ընտրանքի ներկայացուցչական լինելը: Նույն պատկերն է արձանագրվել ֆոկուս խմբային քննարկման ժամանակ: Ահա այսպիսին էին մասնակիցների հիմնական պատասխանները՝ «մեզ մոտ չկա», «մեզ մեր դասախոսը սովորեցրել է հետազոտական աշխատանք գրելու կանոնները», «մեզ մոտ չկա այլ կուրսերում կա», «մեր բուհում չկա, ինձ չի հանդիպել, դա այլ բուհերում է տարածված»: Հավելենք, նաև, որ հարցման մասնակից ուսանողների 85%-ի համար ընդունելի չէ, երբ ուսանողն իր աշխատանքում, առանց պատշաճ հղման օգտագործում է ուրիշի մտքերը, գաղափարները կամ գիտական նորույթները, 4.1%-ը պատասխանել է, որ ընդունելի է, իսկ 10.9%-ը դժվարացել է պատասխանել:

Գծապատկեր 2. Ուսանողների ընկալումը իրենց բուհերում կուրսային, դիպլոմային կամ անհատական աշխատանք գնելու ավանդույթների մասին:



Գծապատկեր 2-ում նշված հարցին «այո» պատասխանած ուսանողներին խնդրել ենք նշել, թե այդպիսի քանի՞ դեպքից են տեղյակ: Գծապատկեր 3-ը ցույց է տալիս, որ հարցմանը մասնակից ուսանողների մոտ կեսը բարեվարքության խախտման դրսևորման հինգից ավելի քիչ դեպքերից է տեղյակ: Սակայն, հարցվածների մոտ մեկ հինգերորդը տասից ավելի դեպքերի մասին է տեղյակ, և միայն 2%-ն է պնդում, որ այդ ամենը համատարած բնույթ է կրում: Որպեսզի հարցը հնարավորինս պարզ ու մատչելի լինի փորձել ենք հարցաշարում չօգտագործել այնպիսի եզրույթներ, որոնք, ինչպես նշեցինք գրականության ամփոփման մեջ, կարող են սուբյեկտիվ ընկալվել կամ չունեն մեկ համընդհանուր սահմանում, օրինակ՝ «գրագողություն», «բարեվարքության խախտում» և այլն, այլ ձևակերպել ենք հստակ՝ «ռեֆերատ ձեռք բերել», «ուրիշի փոխարեն գրել» և այլն: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ գրագողությունը շատ ավելի լայն եզրույթ է, ինչպես նաև հիմք ընդունելով մեր հետազոտության խնդիրները՝ ուսանողների **ընկալումների** վերհանումը, վերջիններիս խնդրել ենք 1-10 սանդղակով գնահատել իրենց բուհերում գրագողության տարածվածության աստիճանը: Միջինում այդ թիվը եղել է 4.9, ինչը համադրելի է գծապատկեր երկուսում ներկայացված արդյունքների հետ: Սա նշանակում է, որ ուսանողները հետևողական են եղել իրենց կարծիքների ու ընկալումների արտահայտման մեջ:

Գծապատկեր 3. Եթե նախորդ՝ 8-րդ հարցին պատասխանել եք «այո», ապա այդպիսի քանի՞ դեպքից եք տեղյակ:



Խախտմանը նպաստող գործոնները

Գրագողությանը նպաստող գործոնները ավելի լավ բացահայտելուն մեզ էապես օգնեցին չորս քաղաքներում կազմակերպված ֆոկուս խմբային քննարկումները: Հարկ ենք համարում սղագրությունից որոշ հատվածներ ներկայացնել առանց խմբագրության: Մասնավորապես՝ Գյումրիում քննարկման մասնակիցներից մեկը նշել է հետևյալը. «Ես երրորդ կուրս եմ ու քանի որ հիմա կուրսային եմ գրում, հենց սկզբից էն կարգի թերի էր կուրսայինի հանձնարարությունը, որ ես գուգլում էի փնտրում, թե ոնց գրեմ, բայց հիմա ինձ մոտ բավականին լավ է ստացվում մի շաբաթում կավարտեմ, եթե հաշվի առնենք էն, որ ես լրագրության ֆակուլտետում եմ»: Իսկ Իջևանի մասնակիցները հետևյալն են նշել. «ուսանողության մեջ վերցնել ինչ-որ գրքից հատված ու հղումներ չտալ՝ գրագողություն անել, շատ է լինում: Տվյալ հատվածը առաջից ընդամենը գրում են «իմ կարծիքով» կամ «ըստ իս» , բայց եթե գիրքը ընթերցում ենք տեսնում ենք՝ նույն բանն է: Էդպես է վարվում ուսանողների 80%-ը, եթե ոչ ավելին»: Այս ամենի մեջ դրականն այն է, որ հարցված ուսանողների բացարձակ մեծամասնության՝ 85%-ի համար, անընդունելի է, երբ ուսանողն իր աշխատանքում, առանց պատշաճ հղման օգտագործում է ուրիշի մտքերը, գաղափարները կամ գիտական նորույթները: Այդուհանդերձ, հարցման արդյունքներից ակնհայտ է դառնում, որ ուսանողների մոտ բացակայում է իրենց դասընկերների և նույնիսկ դասախոսների կողմից կատարվող գրագողությունների դեմ ակտիվ պայքարելու բացակայությունը: Արդյունքներն ամփոփված են ստորև զետեղված երկու գծապատկերներում:

Եվ այսպես, փորձենք գծապատկեր 4-ի և 5-ի պատասխանները պայմանականորեն բաժանել երեք մասի՝ պայքարի ակտիվ միջոցներ, պասիվ արձագանք և պայքարի ցանկության բացակայություն: Գծապատկեր 4-ում, մեր համոզմամբ, պայքարի ակտիվ միջոցների շարքին կարելի է դասել «կնգտեմ այլևս իր հետ չառնչվել», «կնախատեմ ու կասեմ, որ սխալ է վարվել», «այդ մասին կտեղեկացնեմ բուհի համապատասխան աշխատակիցներին (ամբիոնի վարիչ, փոխդեկան, դեկան և այլն)», և «դրա մասին կխոսեմ հրապարակային (օրինակ՝ սոցիալական ցանցերում պատասխանատու պաշտոնյաներին հասցեագրված բաց նամակի միջոցով)» պատասխանները: Ըստ այսպիսի դասակարգման դասընկերոջ կողմից

իրականացված գրագողության դեմ ակտիվ պայքարի ցանկություն ունի հարցված ուսանողների 13.2%-ը: Մեր համոզմամբ պայքարի պասիվ միջոցների շարքին կարելի է դասել հետևյալ պատասխանները՝ «կփորձեմ բացատրել, որ ակադեմիական աշխատանք գրելը ուսանողի կրթական որակների բարձրացմանն է ուղղված և պետք է կատարել այն ինքնուրույն» և «չեմ նախատի, սակայն կփոխեմ կարծիքս իր կատարած աշխատանքների մասին»: Նշյալ երկու տարբերակները ընտրել են հարցված ուսանողների 53.3%-ը: Եվ վերջապես, մեր համոզմամբ, «ոչ մի քայլ էլ չեմ ձեռնարկի, քանի որ դա իմ գործը չէ» և «կխրախուսեմ, քանի որ, եթե կարողացել է անել ու «ջրից չոր դուրս գալ», ապա լավ է արել, հիանալի է» տարբերակների ընտրությունը վկայում է հարցված ուսանողի կողմից գրագողության և ակադեմիական բարեվարքության խախտման այլ դրսևորումների դեմ պայքարի լիակատար բացակայության մասին: Հարցված ուսանողների մեր երրորդը կամ 33.6%-ն գրագողության դեմ պայքարի ցանկություն չունի:

Գծապատկեր 4. Ի՞նչ միջոցներ կձեռնարկեք, եթե իմանաք, որ Ձեր դասընկերը ձեռք է բերել իր աշխատանքը մեկ ուրիշից:



Պատկերը մի փոքր այլ է, երբ ուսանողների ընկալմամբ գրագողություն է կատարել ոչ թե իր դասընկերը, այլ դասախոսը: Դասախոսների հանդեպ ուսանողները փոքր-ինչ ավելի խստապահանջ են, ինչը, բնականաբար ոչ միայն ակնկալվում է, այլև արժանի է դրվատանքի: Այս պարագայում ևս փորձել ենք լինել հստակ և «գրագողություն» եզրույթի փոխարեն գործածել ենք «ակադեմիական աշխատանքը արտագրել է ուրիշից» ձևակերպումը: Նույն կերպ ինչ գծապատկեր 4-ում առկա պատկերը վերլուծելիս պատասխանները փորձենք պայմանականորեն բաժանել երեք խմբի՝ պայքարի ակտիվ միջոցներ, պասիվ արձագանք և պայքարի ցանկության բացակայություն: Պայքարի ակտիվ միջոցների շարքին կարելի է դասել «կնախատեմ ու կասեմ, որ սխալ է վարվել», «այդ մասին կտեղեկացնեմ բուհի համապատասխան աշխատակիցներին (ամբիոնի վարիչ, փոխդեկան, դեկան և այլն)», «այդ մասին նամակով կտեղեկացնեմ ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեին» և «դրա մասին կխոսեմ հրապարակային (օրինակ՝ սոցիալական ցանցերում պատասխանատու պաշտոնյաներին հասցեագրված բաց նամակի միջոցով)» պատասխանները: Ըստ այսպիսի դասակարգման այլոց աշխատանքը արտագրած և սեփական անձին այն վերագրած դասախոսների դեմ պայքարի ցանկություն ունի ուսանողների 38%-ը: Այլ կերպ ասած՝ դասախոսների կողմից իրականացված գրագողության դեմ պայքարելու ցանկություն ունի

շուրջ երեք անգամ ավելի շատ հարցված ուսանող, քան այն դեպքում, երբ գրագողը մեկ այլ ուսանող է: Պայքարի պասիվ միջոցների շարքին, մեր համոզմամբ, կարելի է դասել հետևյալ տարբերակները «կփորձեմ բացատրել, որ դասախոսն իր ուսանողներին պետք է օրինակ ծառայի և ակադեմիական աշխատանքը պետք է կատարել ինքնուրույն» և «չեմ նախատի, սակայն կփոխեմ կարծիքս իր կատարած աշխատանքների մասին»: Այս տարբերակները ընտրել է հարցված ուսանողների 40.7%-ը: Եվ վերջապես, գծապատկեր 5-ի հիման վրա կարելի է ասել, որ 21.3%-ը՝ «ոչ մի քայլ էլ չեմ ձեռնարկի, քանի որ դա իմ գործը չէ» և «կխրախուսեմ, քանի որ եթե կարողացել է անել ու «ջրից չոր դուրս գալ», ապա լավ է արել, հիանալի է» տարբերակներն ընտրած ուսանողները գրագողության դեմ պայքարի ցանկություն չունեն նույնիսկ այն դեպքում, երբ բարեվարքության այդպիսի խախտում դրսևորողը ոչ թե իրենց պես մեկ այլ ուսանող է, այլ իրենց դասախոսը՝ իրենց գիտելիք տվողը:

Գծապատկեր 5. Ի՞նչ միջոցներ կձեռնարկեք, եթե իմանաք, որ Ձեր համալսարանի դասախոսը մեծամասամբ արտագրել է իր թեկնածուական կամ դոկտորական ատենախոսությունը:



Ուսանողների մոտ գրագողության դեմ պայքարի ցանկությունը փորձել ենք բացահայտել նաև ֆոկուս խմբային քննարկման ժամանակ: Մասնավորապես՝ քննարկմանը մասնակից ուսանողներին տրվել է հետևյալ հարցը՝ «Եթե Ձեր համալսարանում ձևավորվի ակադեմիական բարեվարքությունը վերահսկող որևէ մարմին (օրինակ՝ ակադեմիական բարեվարքության կոմիտե) կցանկանա՞ք որպես ուսանող դրան մասնակցել: Ի՞նչ եք կարծում ուսանողները հետաքրքրված կլինե՞ն մասնակցել այդպիսի կոմիտեի աշխատանքներին»: Մասնակիցների ճնշող մեծամասնությունը նշեց, որ ուսանողների մեծ մասը չեն ցանկանա մասնակցել այդպիսի կոմիտեի աշխատանքներին, նախ և առաջ, եռանդի ու կորովի բացակայությամբ պայմանավորված: Օրինակ՝ մասնակիցներից մեկը նշել է, որ իր կուրսում, որտեղ 40 ուսանողներ են սովորում, անգամ սույն հետազոտության շրջանակներում անցկացված անանուն հարցմանն են զլացել պատասխանել: Իսկ իրենց պատրաստակամության բացակայությունը քննարկման մասնակիցները փորձեցին հիմնավորել ժամանակի սղությամբ:

Խախտման շարժառիթները

Իսկ որո՞նք են այն շարժառիթները, որոնք ուսանողներին ստիպում են սեփական ուժերով ակադեմիական աշխատանք գրելու փոխարեն գրագողությամբ զբաղվել կամ օրինակ՝ գնել այդ աշխատանքը Երևանի գետնանցումներում և համալսարաններին կից «սնկի նման աճող» կրպակներից ու կազմակերպություններից գնել այդ աշխատանքները: Արդյունքները ամփոփված են ստորև զետեղված գծապատկերում:

Գծապատկեր 6-ից պարզ է դառնում, որ հարցված ուսանողների 87.7%-ը դժվարությունների է հանդիպում ռեֆերատներ, կուրսային, դիպլոմային կամ այլ աշխատանքներ գրելիս: Այսպես՝ ուսանողների շուրջ 43%-ը՝ որպես շարժառիթ նշել է, անհրաժեշտ գրականությունը բացակայում է: Ֆոկուս խմբային քննարկման մասնակիցները հաստատել են անանուն հարցման պատկերը: Ընդ որում՝ Հայաստանի ֆրանսիական համալսարանի ուսանողներից մեկը նշել է, որ հաճախ հայալեզու գրականության բացակայությունը ստիպում է առանց պատշաճ հղման արտագրել օտարալեզու (ֆրանսալեզու) աղբյուրներից: Նշվել է նաև, որ գրագողության դեպքերը էապես նվազում են, երբ դասախոսը տրամադրում է ակադեմիական աշխատանք կատարելու համար անհրաժեշտ գրականությունը: Որպես շարժառիթներ նշվել են նաև ժամանակի սղությունը (22.4%) և թեմայի բարդ ու ոչ հստակ լինելը (18%):

Գծապատկեր 6. Ռեֆերատներ, կուրսային, դիպլոմային կամ ակադեմիական այլ աշխատանքներ գրելիս ի՞նչ դժվարություններ եք ունենում:



Խախտման անձնագիր 2. Ակադեմիական առաջադիմության սխալ գնահատում

Ա. Ուսանողների ընկալմամբ խախտումը հնարավոր դարձնող գործոնները
• Գնահատում ավանդույթի/սովորույթի ուժով • Վերահսկողության ու հաշվետվողականության պակաս • Այլոց նկատմամբ դրսևորված ենթադրյալ անարդարացի գնահատման դեմ պայքարի ոչ բավարար պատրաստակամություն
Բ. Ուսանողների ընկալմամբ բարեվարքության խախտման շարժառիթները
• Ֆավորիտիզմ • Կախում ուսանողների կողմից վճարվող վարձավճարներից
Գ. Առաջարկություններ
• Բուհերում մշակել առարկայի գնահատման հստակ չափանիշներ (rubric). • Մասնատել առարկայի գնահատումը մի քանի մասերի, գնահատման մեթոդների շարքում դիտարկել անհատական և խմբային առաջադրանքների՝ էսսեների, իրավիճակային խնդիրների, հետազոտական աշխատանքների հանձնարարումը, որոնց համար՝ մշակել գնահատման կրեդիտային չափանիշներ. • Բուհական քննասենյակներում ակադեմիական առաջընթացի գնահատումն իրականացնել մեկից ավել մասնագետների ներկայությամբ, այդ թվում՝ ապահովելով հրավիրյալ մասնագետի ներկայություն, վերջինիս ընտրությունը կատարելով համակարգչի միջոցով՝ պատահական ընտրության սկզբունքով. • Ակադեմիական առաջընթացի գնահատման գործընթացում նեպոտիզմի և ֆավորիտիզմի երևույթները չեզոքացնելու նպատակով ներդնել քննող դասախոսների և հրավիրված մասնագետների կողմից շահերի բախման գրավոր կամ բանավոր հայտարարությունների գործիքը.

Առկա իրավիճակը

Ուսանողների ակադեմիական առաջադիմության գնահատման հետ կապված առարկությունները եղել են բոլոր ժամանակներում և անկախ մշակութային կոնտեքստից: Ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացը հնարավորություն տվեց նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ վերացնել կամ նվազագույնի հասցնել դասախոսների կողմից ուսանողների կամայական գնահատման խնդիրը: Ուսանողների կողմից ստացած գիտելիքի և յուրացված նյութի ծավալը սկսեցին չափել թեստային, իսկ հաճախ էլ համակարգչային-թեստային քննությունների միջոցով, որոնք նույնպես զերծ չեն թերություններից: Օրինակ՝ ֆոկուս խմբային քննարկման մասնակից ուսանողներից մեկը նշել է, որ թեստային քննությունը գնահատման լավագույն ձևը չէ, քանի որ առկա է բախտի գործոնը (ուսանողը կարող է պատահաբար ճիշտ պատասխանը նշել), իսկ մեկ այլ մասնակից էլ նշեց, որ քննության այդպիսի եղանակը նպաստում է ոչ այնքան նյութի ավել լավ յուրացմանն ու ամրապնդմանը, այլ դրդում է ուսանողներին անգիր անել թեստերը իրենց պատասխաններով հանդերձ: Ասվածին կարելի է ավելացնել, որ կազմված թեստերը հաճախ երկիմաստ են, շփոթեցնող և ի տարբերություն այսպես կոչված բաց հարցերի՝ չեն արտացոլում ուսանողի վերլուծական մտքի ընթացքն ու ճկունությունը: Օրինակ՝ ուսանողը 10 գործողությունից կազմված մաթեմատիկական խնդրի 8 գործողությունը կարող է ճիշտ լուծել, վերլուծական

պատշաճ հմտություններ ցուցաբերել, սակայն վերջին երկու գործողության ժամանակ մեխանիկական սխալ թույլ տալ և արդյունքում հանգել սխալ պատասխանի: Նման դեպքերում ուսանողը գուցեև որոշակի միավորներ վաստակի, սակայն թեստային քննությունը այդպիսի հնարավորություն չի տալիս: Հավելենք, որ նշյալ վերապահումները թեստային քննությունների դեմ ամենատարածված և ամենաշատը հնչող փաստարկներն են, սակայն մյուս կողմից պետք է ընդգծել, որ իրենց բոլոր թերություններով հանդերձ թեստային, և հատկապես՝ համակարգչային-թեստային քննությունները էականորեն նվազեցնում են դասախոսների կողմից սուբյեկտիվ-կամայական գնահատումը: Օրինակ՝ ֆոկուս քննարկմանը մասնակից ուսանողներից ոմանք նշեցին բանավոր քննությունների ժամանակ ուսանողների հոգեբանական առանձնահատկությունների դերի, իսկ մնացածները՝ բանավոր քննությունների ժամանակ, որպես կանոն, բարձր գնահատումների մասին, որոնք որևէ կերպ հիմնավորված չեն:

Խախտմանը նպաստող գործոնները

Մյուս կողմից հարցման արդյունքները ցույց են տալիս, որ դասախոսների կողմից ուսանողների գնահատումը հենց այդ նույն ուսանողների կողմից որպես մեծ խնդիր չի ընկալվում: Ինչպես ներկայացված է ներքոզետեղյալ գծապատկեր 7-ում ուսանողների 70.2%-ը գտնում է, որ դասախոսները, որպես կանոն, արդար են գնահատում, իսկ 9.3%-ը կարծում է, որ մշտապես արդար են գնահատում: Հարցված ուսանողների 17.5%-ը գտնում է, որ մեծամասամբ անարդար են գնահատում և միայն 0.5%-ն է գտնում, որ շատ անարդար են գնահատում: Սակայն, կցանկանայինք նշել մի առանձնահատկություն: Ինչպես երևում է սույն հետազոտության հավելվածից հարցն ինքնին փակ հարց է, այսինքն՝ չկա «այլ/նշեք Ձեր տարբերակը» պատասխանը: Սակայն, հարցված ուսանողների 3%-ը որոշել է ոչ թե այլ պատասխան ընտրել, այլ թղթի վրա գրել իր տարբերակը, որը մենք պայմանականորեն կանվանենք «այլ տարբերակ»:

Գծապատկեր 7. Որքանո՞վ են արդար գնահատում դասախոսները Ձեր համալսարանում:



Մասնավորապես՝ որոշ ուսանողներ չեն զլացել և գրել են, որ դասախոսները գնահատում են այսպես կոչված «սիմպատիայի» հիման վրա, ինչը, եթե զերծ մնանք ժարգոնային ռուսաբանությունից և ձևակերպենք գիտական ոճով, ֆավորիտիզմի դրսևորում է: Ֆավորիտիզմի դրսևորումների մասին վկայել են նաև ֆոկուս խմբային քննարկման մասնակիցները: Այնուամենայնիվ, անանուն հարցման մեջ որոշ հարցեր ճշգրտվել են այլ հարցերով: Օրինակ՝ «որքանո՞վ են արդար գնահատում դասախոսները Ձեր համալսարանում» հարցը ճշգրտվել է «1-10 սանդղակով գնահատեք ԲՈՒՀ-ում

դասախոսների կողմից ուսանողներին սուբյեկտիվ ու կամայական գնահատման տարածվածության աստիճանը (1՝ առհասարակ տարածված չէ, 10՝ լայնորեն տարածված է)» հարցով: Ըստ հարցման արդյունքների արդարացի գնահատման ընկալման վերաբերյալ ուսանողների գնահատումների միջին թվաբանականը 4.8 է: Գնահատումն առավել մանրամասն ներկայացված է ստորև զետեղված աղյուսակում:

Գծապատկեր 8. 1-10 սանդղակով գնահատեք բուհում դասախոսների կողմից ուսանողներին սուբյեկտիվ ու կամայական գնահատման տարածվածության աստիճանը (1՝ առհասարակ տարածված չէ, 10՝ լայնորեն տարածված է):



Հավելենք, որ հարցման միջոցով փորձել ենք պարզել, թե արդյոք ուսանողները պատրաստ են ակտիվորեն պայքարել իրենց ընկալմամբ անարդարացիորեն ցածր և անարդարացիորեն բարձր գնահատումների դեմ: Փորձել ենք պարզել նաև, թե ինչպիսի միջոցների կդիմեն ուսանողները, եթե անարդարացի գնահատումը տեղի ունենա իրենց նկատմամբ և ինչ կձեռնարկեն, եթե այն տեղի ունենա իրենց դասընկերոջ նկատմամբ: Արդյունքները ամփոփված են ներքոզետեղյալ աղյուսակում:

Հատկանշական է, որ ինչպես երևում է հավելվածում տեղադրված հարցաշարից, ուսանողները մի քանի տարբերակի ընտրության հնարավորություն են ունեցել, այդ իսկ պատճառով աղյուսակի 3-ի միևնույն տողում առկա թվերի գումարը ավելին է, քան 100%-ը: Նշենք նաև, որ «կհորդորեմ»-ով սկսվող պատասխանները, մեր համոզմամբ դիտարկվում են պայքարի համեմատաբար պասիվ մեթոդներ, «ոչինչ չեմ ձեռնարկի/ոչինչ չեմ ձեռնարկի, քանի որ դա իմ գործը չէ» և «կփորձեմ գտնել այնպիսի մարդու, որը կմիջնորդի, որ բարձրացնեն գնահատականս» պատասխանները վկայում են ենթադրյալ անարդարացի գնահատման դեմ պայքարի բացակայության մասին, իսկ մնացյալ բոլոր պատասխանները՝ ակտիվ պայքարի պատրաստակամության մասին:

Աղյուսակ 3. Ուսանողների վերաբերմունքը դասախոսների կողմից անարդարացի գնահատման պարագայում

Հարց	Գործողություն								
	Կդիմեմ ուսանողական խորհրդին	Այդ մասին կտեղեկացնեմ բուհի ներսում համապատասխան պաշտոնյաներին (ամբիոնի վարիչ, փոխդեկան, դեկան և այլն), իսկ անհրաժեշտության դեպքում նաև բուհի կառավարման (հոգաբարձուների խորհրդին)	Իմ զայրույթն ու բողոքը կարտահայտեմ սոցիալական ցանցերում	Կփորձեմ գտնել այնպիսի մարդու, որը կմիջնորդի, որ բարձրացնեն գնահատականս	Այլ միջոցների կդիմեմ (խնդրում եմ մանրամասնեք)	Կառարկեմ և անհարժեշտության դեպքում կհանդիմանեմ դասախոսին	Կհորդորեմ, որպեսզի դասընկերս դիմի ուսանողական խորհրդին	Կհորդորեմ, որպեսզի դասընկերս դիմի բուհ-ի համապատասխան պաշտոնյաներին (ամբիոնի վարիչ, փոխդեկան, դեկան և այլն)	Ոչինչ էլ չեմ ձեռնարկի
Ի՞նչ կանեք, եթե համարեք, որ դասախոսը Ձեզ անարդարացիորեն ցածր է գնահատել (կարող եք ընտրել մեկից ավելի տարբերակներ):	24.6%	62.8%	8.2%	7.4%	2.5%	1.4%	-	-	14.5%
Ի՞նչ կանեք, եթե համարեք, որ դասախոսը անարդարացիորեն բարձր է գնահատել Ձեր դասընկերոջը (կարող եք ընտրել մեկից ավելի տարբերակներ)		16.9%	3.8%	-	6%	16.4%	-	-	67.2%
Ի՞նչ կանեք, եթե համարեք, որ դասախոսը անարդարացիորեն ցածր է գնահատել Ձեր դասընկերոջը (կարող եք ընտրել մեկից ավելի տարբերակներ):	6.3%	12.8%	-	-	-	16.9%	26%	45.6%	36.6%

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից ուսանողները ավելի հակված են պայքարի ակտիվ միջոցներ ձեռնարկել, երբ, իրենց ընկալմամբ, անարդարացի գնահատումը իրենց նկատմամբ է տեղի ունեցել, քան եթե այն այլ ուսանողների նկատմամբ է տեղի ունեցել: Ըստ հարցման արդյունքների մասնակիցների գերակշիռ մեծամասնությունը պատրաստ է ակտիվորեն պայքարել այն դեպքում, երբ, իրենց կարծիքով, իրենք անարդարացի են գնահատվել դասախոսի կողմից: Այդ պարագայում ոչինչ չի ձեռնարկի հարցվածների միայն 14.5%-ը: Ուրախալի է, ուսանողների միայն 7.4%-ն է պատրաստ միջնորդի միջոցով բարձրացնել իր գնահատականը: Հակված ենք հավատալ, որ ուսանողների այսպիսի տրամադրություններին ծանոթ են նաև դասախոսները, որոնք ավելորդ խնդիրներից խուսանավելու նպատակով, հաճախ անարդարացիորեն բարձր են գնահատում իրենց ուսանողներին, իսկ վերջիններիս էլ թվում է, թե իրենց դասախոսները իրենց արդար են գնահատում: Ուստի, պատահական չէ, որ հարցված ուսանողների 70.2%-ի ընկալմամբ դասախոսները, որպես կանոն արդար են գնահատում, իսկ 17.5%-ն էլ այն կարծիքին է, որ դասախոսները մշտապես են արդար գնահատում:

Խախտման շարժառիթները

Ինչպես և ենթադրվում է, հարցված ուսանողներն ավելի ակտիվ կպայքարեն այն դեպքում, երբ մեկ այլ ուսանող, իրենց ընկալմամբ, անարդարացիորեն ցածր է գնահատվել, քան՝ անարդարացիորեն բարձր գնահատվելու դեպքում: Դասընկերոջն, իր ընկալմամբ, ցածր գնահատելու պարագայում ոչինչ չի ձեռնարկի ուսանողների սոսկ 36.6%-ը, քանի որ այդպես պատասխանած ուսանողները գտնում են, որ այլոց ցածր գնահատումը իրենց գործը չէ: Միևնույն ժամանակ, հարցված ուսանողների 67.2% դասընկերոջը անարդարացիորեն բարձր գնահատելու պարագայում ոչինչ չի ձեռնարկի՝ համարելով, որ դա իր գործը չէ: Հավելենք, որ հարցված ուսանողները գրեթե հակված չեն խնդիրները հրապարակայնորեն քննարկել: «Ի՞նչ կանեք, եթե համարեք, որ դասախոսը անարդարացիորեն ցածր է գնահատել Ձեր դասընկերոջը» հարցի հնարավոր պատասխանի տարբերակների մեջ միտումնավոր ձեռնպահ ենք մնացել «իմ զայրույթն ու բողոքը կարտահայտեմ սոցիալական ցանցերում» տարբերակը նշելուց, որպեսզի տեսնենք, թե ուսանողների քանի տոկոսը այն կնշի որպես «այլ միջոց»: Հատկանշական է, որ ոչ մի ուսանող այն որպես «այլ միջոց» չի նշել: Իսկ առհասարակ այլ/այլընտրանքային միջոցների մեջ ուսանողները մեծամասամբ նշել են տվյալ դասախոսի հետ զրուցելը կամ առանձին հանդիպել-քննարկելը և միայն մեկ ուսանող է նշել, որ վերաքննություն ու հանձնաժողով կպահանջի:

Հավելենք, որ ֆոկուս խմբային քննարկման ժամանակ մասնակիցներից ուսանողները չեն նշել բուհական համակարգում կոռուպցիան և կաշառակերությունը՝ որպես անարդարացի գնահատման պատճառ, այլ հիմնականում մատնանշել են ֆավորիտիզմը և սովորույթի/ավանդույթի ուժով գնահատումը: Սովորույթի/ավանդույթի ուժով գնահատումը (ձևակերպումը մերն է), ըստ ֆոկուս խմբային քննարկմանը մասնակցած ուսանողների, նախկինում գերազանց առաջադիմություն ունեցող և պետության կողմից վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) սովորող ուսանողների անարդարացի բարձր գնահատումն է: Դրա արդյունքում անվճար սովորելու հնարավորությունից օգտվում են միևնույն ուսանողները, իսկ մնացածները զրկվում են այսպես կոչված ռոտացիայի հնարավորությունից (վճարովի ուսուցման համակարգից տեղափոխում դեպի անվճար ուսուցման համակարգ): Սրա պատճառը, ըստ

ֆոկուս խմբային քննարկմանը մասնակցած ուսանողների ոչ այնքան դասախոսների չարամտությունն ու կանխակալությունն է, որքան անվճար սովորող ուսանողներին «վատություն» չանելու ցանկությունը և վերջիններիս «անվճար հիմունքներով սովորելու հնարավորությունը պահպանելու» հնարավորության ընձեռնումը: Այդուհանդերձ, մենք հեռու ենք այն համոզմունքից, որ կոռուպցիան և կաշառակերությունը հայաստանյան բուհական համակարգին ներհատուկ «ախտ» չէ, ուստի գտնում ենք, որ խնդիրը լրացուցիչ և համակողմանի ուսումնասիրության կարիք ունի: Մենք ձեռնպահ ենք մնացել այդ հարցի վրա առանձնակի շեշտադրում անելուց՝ հաշվի առնելով սույն հետազոտության խնդիրները, որի մեջ բուհերում կոռուպցիայի ու կաշառակերության տարածվածության վերաբերյալ ուսանողների ընկալումը չի մտնում:

Խախտման անձնագիր 3. Անհարկի միջամտություն պրոֆեսորադասախոսական կազմի անդամների աշխատանքի նշանակման, աշխատանքից ազատման և մասնագիտական առաջխաղացման վերաբերյալ որոշումների կայացման վրա

_Ա. Ուսանողների ընկալմամբ խախտումը հնարավոր դարձնող գործոնները
• Գործընթացի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության պակաս • Ուսանողների ցանկություններից ու գնահատումներից բացի աշխատանքի արդյունավետության չափման մեխանիզմների բացակայություն
Բ. Ուսանողների ընկալմամբ բարեվարքության խախտման շարժառիթները
• Ոչ թափանցիկ ընթացակարգեր • Աշխատանքի պատշաճ գնահատման հստակ չափանիշների բացակայություն կամ վերջինիս վերաբերյալ իրազեկվածության բացակայություն
Գ. Առաջարկություններ
• Բուհերում մշակել աշխատանքի ընդունման և պրոֆեսորադասախոսական թափուր հաստիքների տեղակալման հստակ չափորոշիչներ ու բարձրացնել գործընթացների թափանցիկությունը. աշխատանքի ընդունումը կազմակերպել բաց մրցույթային հիմունքներով և սահմանված չափորոշիչների կիրառմամբ, իսկ աշխատանքից ազատման որոշումների համար ապահովել պատշաճ հիմնավորվածության և որոշումների հրապարակայնություն. • Բուհական անձնակազմի աշխատանքի խրախուսումը և ծառայողական առաջխաղացումը կազմակերպել չափելի հիմնական կատարողականի ցուցանիշների (KPI) հիման վրա.

Առկա իրավիճակը

Ֆոկուս խմբային քննարկմանը ուսանողները նշում էին, որ իրենք խնդրի մանրամասներից տեղյակ չեն, քանի որ որոշումների կայացմանը չեն մասնակցում: Որոշ ուսանողներ նշել են, որ որոշումների կայացմանը մասնակցում են ուսանողական խորհրդի ներկայացուցիչները, որոնք մասնակցում են բուհի կոլեգիալ կառավարմանը: Այս պարագայում հարց է առաջանում. մի՞թե ուսխորհրդականները ուսանողների առջև զեկույցներով, հաշվետվություններով հանդես չեն գալիս կամ վերջիններիս հետ միջանձնային շփումներում չեն խոսում խնդիրների մասին: Ինչևէ, իրականությունն այն է, որ որոշ բուհերում, ինչպես նշեցին մասնակիցները, դասախոսները այլ խումբ/ֆակուլտետ են տեղափոխվել ուսանողների կոլեկտիվ դիմում-բողոքների հիման վրա: Նշվեց նաև, որ մեծ ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից իրականացվող դասախոսների գնահատումներին: Աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման և խրախուսման կանոնակարգերի մասին ուսանողները տեղյակ չէին: Հարկ ենք համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ հետազոտության նպատակը ուսանողների ընկալումների բացահայտումն է, ուստի բուհերի կողմից «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի չորրորդ կետի պահանջների կատարումը, որը նախատեսում է մրցութային բաց գործընթացի միջոցով թափուր հաստիքների տեղակալում, լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի[35]:

Խախտմանը նպաստող գործոններն ու շարժառիթները

Անանուն հարցմանը մասնակից ուսանողները գնահատել են ԲՈՒՀ-ում պրոֆեսորադասախոսական պաշտոններում աշխատանքի ընդունման գործընթացի արդարացիությունը (1՝ շատ արդարացի է, 10՝ ծայրաստիճան անարդարացի է), ինչպես նաև ԲՈՒՀ-ում աշխատակիցների ծառայողական առաջխաղացման հնարավորությունները որքանո՞վ են արդարացի (1՝ շատ արդարացի է, 10՝ ծայրաստիճան անարդարացի է): Առաջին հարցի պատասխանների միջին թվաբանականը 4.6 է, իսկ երկրորդինը՝ 4.9, այսինքն՝ աշխատանքի ընդունման/աշխատանքից ազատման և ծառայողական առաջխաղացման արդարացիության վերաբերյալ ուսանողների ընկալումները գրեթե նույնն են: Ընդհանուր պատկերն ավելի լավ ամփոփված է ներքոզետեղյալ գծապատկերներում:

[35] «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2005.01.31/8(380) Հոդ.159, https://www.arlis.am/documentview.aspx?docid=25820 :

Գծապատկեր 9. 1-10 սանդղակով գնահատեք բուհում պրոֆեսորադասախոսական պաշտոններում աշխատանքի ընդունման գործընթացի արդարացիությունը (1՝ շատ արդարացի է, 10՝ ծայրաստիճան անարդարացի է):



Գծապատկեր 10. 1-10 սանդղակով գնահատեք, թե բուհում աշխատակիցների ծառայողական առաջխաղացման հնարավորությունները որքանո՞վ են արդարացի (1՝ շատ արդարացի է, 10՝ ծայրաստիճան անարդարացի է):



Եվ վերջապես, տեսնենք, թե որքանով են ուսանողները պատրաստ ակտիվորեն պայքարել նեպոտիզմի և/կամ կոռուպցիայի արդյունքում պաշտոններ ստացող դասախոսների դեմ:

Գծապատկեր 11-ից պարզ է դառնում, որ նեպոտիզմի և/կամ կաշառքի միջոցով բուհում պաշտոններ զբաղեցնող դասախոսների դեմ, փաստերի առկայության պարագայում պատրաստ է պայքարել ուսանողների գերակշիռ մեծամասնությունը, մինչդեռ միայն 16.4%-ն է կարծում, որ ոչինչ չի անի, քանի որ դա իրեն չի վերաբերում: Այսպիսի պատկերն իրոք հուսադրող է, սակայն պետք է կաշվի առնել, որ նեպոտիզմը և կաշառքը իրենց բնույթով լատենտային հանցագործություններ են և ուսանողների համար փաստերը, առավել ևս անհերքելի փաստերը, հաճախ դժվարամատչելի են: Հավելենք, որ հարցման մասնակից ուսանողները մի քանի տարբերակներ ընտրելու հնարավորություն են ունեցել և դրանով պայմանավորված՝ գծապատկեր 11-ում նշյալ տոկոսների հանրագումարը հարյուրից ավելի է:

Գծապատկեր 11. Ի՞նչ միջոցներ կձեռնարկեք, եթե փաստեր ունենաք առ այն, որ, այսպես կոչված, «խնամի-բարեկամ-ծանոթ» կապերն օգտագործելով կամ էլ կաշառքով պաշտոններ են ստանում Ձեր բուհում (կարող եք ընտրել մեկից ավելի տարբերակներ):



Խախտման անձնագիր 4. Բուհերի քաղաքականացում

Ա. Ուսանողների ընկալմամբ խախտումը հնարավոր դարձնող գործոնները
• Քաղաքականացված ուսանողական խորհուրդներ • Նախկինում առկա ավանդույթների ու սովորույթների շարունակություն ինիցիացիայի միջոցով
Բ. Ուսանողների ընկալմամբ բարեվարքության խախտման շարժառիթները
• Արտոնություններ և նախապատվություն ծառայողական առաջխաղացման ժամանակ
Գ. Առաջարկություններ
• Օրենսդրորեն սահմանափակել բուհերի կառավարման բարձրագույն օղակներում քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև՝ կուսակցությունների կառավարման ղեկավար և վերահսկողական մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց ներգրավվման հնարավորությունները. • Բուհերի ուսանողական խորհուրդների ձևավորման գործընթացում սահմանափակել քաղաքական կողմնորոշում և կուսակցական պատկանելիություն ունեցող ուսանողների ներգրավումը. • Բուհերի կառավարման ու ուսանողական խորհուրդների անդամների, ինչպես նաև՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար սահմանել քաղաքական զսպվածության և չեզոքության պահանջներ ու սահմանափակումներ, դրանց կիրարկման ընթացակարգեր. դրանց չկատարման կամ խախտման համար նախատեսել վարչական և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Առկա իրավիճակը

Բուհերի քաղաքականացվածությունը, ըստ ֆոկուս խմբային քննարկմանը մասնակցած ուսանողների ՀՀ բուհական համակարգում՝ սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրված բարեվարքության խախտման դրսևորումների մեջ համեմատաբար ավելի քիչ է տարածված: Գրեթե բոլոր ուսանողները միաձայն պնդում էին, որ բուհերի քաղաքականացվածության խնդիրը գրեթե լուծված է, իսկ խնդրի չլուծված մասը կապված է քաղաքականացված ու կուսակցականացված ուսանողական խորհուրդների հետ, որոնք, եթե ուսանողների բառամթերքը գիտական ոճով փորձենք մեկնաբանել, ապա՝ ոչ այլ ինչ են, քան նախահեղափոխական ժամանակներից մնացած ատավիզմ: Բուհերի քաղաքականացվածության աստիճանի վերաբերյալ ուսանողների ընկալումը պարզելու համար հստակ հարցեր ենք տվել նաև անանուն հարցման մասնակից ուսանողներին: Արդյունքներն ամփոփված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4-ից պարզ է դառնում, որ դասերի ընթացքում դասախոսները մեծամասամբ ձեռնպահ են մնացել քաղաքական կոչեր հնչեցնելուց: Սակայն, ուսանողների ավելի քան մեկ քառորդը ականատես է եղել այնպիսի իրավիճակի, երբ դասախոսը դասի ժամանակ այս կամ այն

քաղաքական ուժին քվեարկել/չքվեարկելու կամ կուսակցական շարքեր համալրելու կամ հանրաքվեի կամ այլ քաղաքական նախաձեռնության միանալու կոչ է արել: Եվ թեպետ ուսանողների ընկալմամբ բուհերի քաղաքականացվածության խնդիրը զանգվածային ու համատարած բնույթ չի կրում, այնուամենայնիվ խնդիրը առկա է և նշմարելի հատկապես բուհի ներսում պաշտոններ ստանալիս և ծառայողական առաջխաղացման ժամանակ: Ըստ հարցված ուսանողների՝ քաղաքական հայացքները ամենաքիչ նշանակությունն ունեն ուսանողներին գնահատելիս, թեպետ «մասամբ այո» պատասխանը ընտրած ուսանողների թիվը վկայում է, որ որոշ դասախոսների պարագայում խնդիրն, այնուամենայնիվ, առկա է: Եթե ուսանողներին գնահատելիս քաղաքական հայացքները հաշվի չեն առնվում, ապա դասախոսին աշխատանքի ընդունելիս ուսանողների միայն 40.2%-ն է նշել, որ բուհը քաղաքական հայացքները հաշվի չի առնում: Մեր համոզմամբ, բուհերի քաղաքականացվածության մասին և, առհասարակ, սույն հետազոտության մեջ քննարկվող բարեվարքության խախտումների և տարատեսակ արգահատելի երևույթների մասին միայն ուսանողների ընկալումների վրա դժվար է կարծիք կազմել, ուստի կրթական համակարգի բոլոր շահառուների ներկայացուցչական ընտրանքի մասնակցությունն է անհրաժեշտ առկա իրավիճակի նկատմամբ առավել հստակ պատկերացում կազմելու համար:

Աղյուսակ 4. Ուսանողների կարծիքը բուհերի քաղաքականացվածության վերաբերյալ

Հարց	Պատասխան			
	Այո	Մասամբ այո	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել
Ձեր դասախոսը երբևէ դասի ժամանակ հորդորե՞լ է ընտրությունների ընթացքում քվեարկել կամ չքվեարկել որևէ քաղաքական ուժի, համալրել որևէ կուսակցության շարքերը կամ մասնակցել որևէ հանրահավաքի կամ կուսակցության նախաձեռնության:	26.3%		73.7%	
Ձեր բուհում դասախոսները ուսանողներին գնահատելիս վերջիններիս քաղաքական հայացքները (կուսակցական պատկանելությունը) հաշվի առնու՞մ են:	0.8%	14.5%	65.6%	19.1%
Արդյո՞ք նշանակություն ունեն անհատի քաղաքական հայացքները (կուսակցական պատկանելությունը) Ձեր ԲՈՒՀ-ում աշխատանքի ընդունվելիս:	5.7%	16.9%	40.2%	37.2%

Արդյո՞ք նշանակություն ունեն անհատի քաղաքական հայացքները (կուսակցական պատկանելությունը) Ձեր բուհում բարձր պաշտոններ ստանալիս (ամբիոնի վարիչ, փոխդեկան, դեկան, պրոռեկտոր, ռեկտոր):	16.1%	24.9%	26%	33.1%

Առկա իրավիճակի վերաբերյալ ավել լավ պատկերացում կազմելու համար անանուն հարցմանը մասնակցած ուսանողներին խնդրեցինք 1-10 սանդղակով գնահատել թե որքան հաճախ են քաղաքական կոչերով հանդես գալիս իրենց դասախոսները: Միջինում այդ գնահատականը կազմել է 3.28, ինչը սույն հետազոտության շրջանակներում իրականացված սանդղակային հարցումների ամենափոքր միջին թվաբանականն է: Պատկերն առավել մանրամասն ներկայացված է ներքոզետեղյալ գծապատկերում:

Գծապատկեր 12. 1-10 սանդղակով գնահատեք, թե որքան հաճախ են դասախոսները քաղաքական կոչերով կամ հայտարարություններով հանդես գալիս դասի ժամանակ (1՝ երբեք, 10՝ չափազանց շատ):



Ինչպես երևում է գծապատկեր 12-ից ուսանողների հարցված ուսանողների մեծ մասն այն կարծիքին է, որ իրենց դասախոսները հաճախ չէ, որ դասի ժամանակ քաղաքական կոչերով են հանդես գալիս:

Խախտմանը նպաստող գործոնները

Պետք է արձանագրենք, որ բուհերի ուսանողական խորհուրդների քաղաքականացվածության հիմնախնդիրը ցայսօր էլ շարունակում է չլուծված մնալ: 2018թ.-ին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները էական ազդեցություն չեն ունեցել, և ՀՀ բուհական համակարգը իրավամբ ունի քաղաքականացված ուսանողական խորհուրդների ժողովրդավարացման կարիք: Նույնիսկ այն ուսանողները, որոնք նշում էին, որ իրենց բուհերը քաղաքականացված չեն և որ ուսանողներին անվանական կրթաթոշակ տրամադրելու կամ դասախոսների ծառայողական առաջխաղացման վերաբերյալ որոշումներ կայացնելիս վերջիններիս քաղաքական հայացքներին որևէ նշանակություն չի տրվում, պնդում էին, որ քաղաքականացվածության հիմնական օջախը ուսանողական խորհուրդն է: Ընդգծենք, որ թեպետ ուսանողական խորհուրդների քաղաքականացվածության կամ, եթե առավել դիպուկ ձևակերպենք, կուսակցականացվածության հարցը դուրս է սույն հետազոտության շրջանակներից, այնուամենայնիվ, տակավին վստահ ենք, որ խնդիրն ունի համակողմանի գիտական ուսումնասիրության կարիք, որից բխող քաղաքականության փաստաթղթերի (policy paper) հիման վրա «վիրահատական միջամտությամբ» պետք է հեռացնել «չարորակ ուռուցքը»՝ կուսակցականացված և հակաժողովրդավարական ուսանողական խորհուրդը՝ ուսանողի գիտակցության մեջ ներդնելով ժողովրդավարական, արդար, հաշվետու ու թափանցիկ կառավարման մշակույթը: Հետազոտության շրջանակներում իրականացված ֆոկուս խմբային քննարկումից հանգել ենք մի կարևոր եզրահանգման. չկա «ներքևից վերև» (bottom-up) փոփոխությունների պահանջ և ուսանողական խորհուրդների և առհասարակ համալսարանների քաղաքականացման հետ կապված խնդիրը պետք է իրականացվի «վերևից ներքև» (top-down) միջամտությամբ: Այդուհանդերձ, հավելենք, որ քննարկմանը մասնակցած ուսանողները հերքեցին, որ իրենց համապատասխան բուհերում դասախոսը կամ ուսանողն իր քաղաքական հայացքների համար ճնշումների կամ հետապնդման է ենթարկվել: Համենայն դեպս, ըստ ուսանողների, իրենք այդպիսի դեպքերի ականատես չեն եղել:

Խախտմանը նպաստող գործոնների շարքին կարելի է դասել նաև այն, որ ուսանողները առավել հակված են խնդրի մասին բարձրաձայնել այն ժամանակ, երբ անձամբ իրենց իրավունքներն են ոտնահարվել: Մասնավորապես՝ հարցմանը մասնակից ուսանողներին խնդրել ենք նշել, թե ինչ միջոցներ կձեռնարկեն իրենք, եթե իրենք, իրենց դասընկերները կամ դասախոսները հետապնդման ենթարկվեն իրենց քաղաքական հայացքների համար: Արդյունքներն ամփոփված են աղյուսակ 5-ում:

Ինչպես բարեվարքության խախտման նախորդ դեպքերն ուսումնասիրելիս, այս անգամ նույնպես հարցված ուսանողների պատասխանները կարելի է խմբավորել: : Մասնավորապես՝ «Այլ բուհ կտեղափոխվեմ (կհորդորեմ, որպեսզի վերջինս այլ բուհ տեղափոխվի)», «Այլևս չեմ բարձրաձայնի իմ քաղաքական համոզմունքները (կհորդորեմ, որպեսզի վերջինս չբարձրաձայնի իր քաղաքական համոզմունքների մասին)» և «Ոչինչ էլ չեմ անի ու կհամակերպվեմ» պատասխանները վկայում են ակտիվ պայքարի բացակայության, իսկ մնացյալ պատասխանները՝ պայքարելու ցանկության մասին: Իհարկե, կարելի է պնդել նաև, որ «այլ բուհ կտեղափոխվեմ» տարբերակը կարող է հանդես գալ որպես պայքարի պասիվ արտահայտչամիջոց: Ինչևէ, հարցման արդյունքները վկայում են, որ ուսանողները ակտիվորեն

կպայքարեն իրենց իրավունքների համար այն պարագայում, երբ համալսարանում իրենք ենթարկվեն քաղաքական հետապնդման: Միևնույն ժամանակ, վերջիններս շատ ավելի հակված են պայքարել իրենց դասընկերների, քան դասախոսների իրավունքների համար: Դասընկերների իրավունքների համար ակտիվ պայքարի ցանկությունն, անշուշտ դրվատելի է, սակայն ուսանողների մի ստվար զանգված պատրաստ չէ պայքարել իրենց դասախոսների իրավունքների համար: Եվ սա այն պարագայում, երբ դասախոսն ավելի է կախված բուհից, քանի որ ուսանելու նպատակով այլ բուհ տեղափոխվելը, որպես կանոն, ավելի դյուրին է, քան այլ բուհում աշխատանքի անցնելը: Բացի այդ՝ կախված լինելով ուսանողների վճարած վարձավճարներից համալսարանները շահագրգռված չեն լինի վերջիններիս վրա իրենց քաղաքական համոզմունքներով պայմանավորված ճնշումներ գործադրել, մինչդեռ իրավիճակը կարող է տրամագծորեն այլ լինել դասախոսների պարագայում: Հավելենք, որ ուսանողները հնարավորություն են ունեցել միանգամից մի քանի տարբերակ նշելու, այդ իսկ պատճառով աղյուսակ 5-ում միևնույն տողի վրա նշված տոկոսների գումարը հարյուրից ավելի է:

Խախտման շարժառիթները

Թեպետ ֆոկուս խմբային քննարկմանը մասնակից ուսանողների պնդմամբ բուհերը մեծամասամբ քաղաքականացված չեն, այնուամենայնիվ անանուն հարցման արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքական հայացքներն ու կուսակցական պատկանելությունը, հատկապես հաշվի են առնվում դասախոսների ծառայողական առաջխաղացման ժամանակ: Ինչպես երևում է աղյուսակ 4-ից՝ հարցված ուսանողների սոսկ 26%-ն է նշել, որ դասախոսներին բուհի ներսում պաշտոնների նշանակելիս վերջիններիս քաղաքական հայացքները հաշվի չեն առնվում: Ուստի, կարող ենք եզրակացնել ուսանողների ընկալմամբ սեփական քաղաքական հայացքները ի ցույց դնելու և բուհերը կուսակցականացմանը նպաստելու հիմնական շարժառիթը բուհի ներսում ավելի բարձր պաշտոն ունենալն է: Հավելենք, որ այս խնդիրը սերտորեն կապված է բարեվարքության խախտման վերը նկարագրված երրորդ խախտման՝ պրոֆեսորադասախոսական կազմի անդամների աշխատանքի նշանակման, աշխատանքից ազատման և մասնագիտական առաջխաղացման վերաբերյալ որոշումների կայացման վրա անհարկի միջամտության հետ: Ուստի, այս քաղաքականացման խնդիրը պետք է նաև այդ լույսի ներքո դիտարկել:

Աղյուսակ 5. Ուսանողների կարծիքը բուհերի քաղաքականացվածության վերաբերյալ

Հարց	Պատասխան				
	Հրապարակավ, այդ թվում՝ նաև սոցիալական ցանցերի միջոցով այդ մասին կբարձրաձայնեմ	Այլ բուհ կտեղափոխվեմ (կհորդորեմ, որպեսզի վերջինս այլ բուհ տեղափոխվի)	Կփորձեմ հարցը հստակեցնել բուհի ղեկավարության հետ	Այլևս չեմ բարձրաձայնի իմ քաղաքական համոզմունքները (կհորդորեմ, որպեսզի վերջինս չբարձրաձայնի իր քաղաքական համոզմունքների մասին)	Ոչինչ էլ չեմ անի ու կհամակերպվեմ
Ի՞նչ կանեք, եթե Ձեզ բուհում քաղաքական հայացքների (կուսակցական պատկանելության) համար խտրականության ենթարկեն (կարող եք ընտրել մեկից ավելի տարբերակներ):	41.5%	10.4%	62%	14.5%	8.5%
Ի՞նչ կանեք, եթե Ձեր դասընկերոջը բուհում քաղաքական հայացքների համար խտրականության ենթարկեն (կարող եք ընտրել մեկից ավելի տարբերակներ):	30.3%	7.4%	47.3%	15.8%	23%
Ի՞նչ կանեք, եթե Ձեր դասախոսին բուհում քաղաքական հայացքների (կուսակցական պատկանելության) համար խտրականության ենթարկեն (կարող եք ընտրել մեկից ավելի տարբերակներ):	31.1%	8.2%	42.1%	5.2%	37.2%

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերոշարադրյալ վերլուծության հիման վրա հանգել ենք մի շարք եզրակացությունների, որոնցից, մասնավորապես առանձնացրել ենք հետևյալները:

1. Ուսանողները պատրաստակամ են առավել ակտիվորեն պայքարել սույն հետազոտության շրջանակներում բարեվարքության խախտման դրսևորումների դեմ, երբ այն իրենց է առնչվում: Այլապես, հանուն բարեվարքության պայքարել ցանկացող ուսանողների թիվը զգալիորեն փոքր է:
2. Ուսանողները, իրենց հավաստմամբ, ժամանակ չունեն ներգրավվելու ակադեմիական բարեվարքության ամրապնդմանը միտված տարատեսակ մարմինների աշխատանքներում:
3. Տարատեսակ մարմիններում ներգրավված ուսանողական խորհուրդների ներկայացուցիչների գործունեությունը թափանցիկ չէ և հետազոտությանը մասնակից ուսանողները տեղյակ չէին վերջիններիս գործունեության վերաբերյալ:
4. Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրված ակադեմիական բարեվարքության 4 խախտումներից հետազոտությանը մասնակցած ուսանողները ամենաքիչը գրագողության դեմ են հակված պայքարել, իսկ ամենաշատը՝ սխալ/անարդարացի գնահատումների:

Հետազոտության արդյունքում հանգել ենք նաև բարեվարքության խախտման առանձին դրսևորումների վերաբերյալ եզրահանգումների, որոնք ներկայացնում ենք խմբավորված:

1. Խաբեություն և գրագողություն

Ուսանողների ընկալմամբ խաբեբայությանն ու գրագողությանը նպաստող գործոններն են դասախոսների կողմից տրվող ոչ հստակ, իսկ երբեմն՝ անիրատեսական հանձնարարությունները, ուսանողների շրջանում գրագողության դեմ պայքարի մոտիվացիայի պակասը կամ բացակայության, դիպլոմային/կուրսային և անհատական աշխատանքների պատվերներ ընդունող կազմակերպությունների առկայությունը և, վերջապես, դասախոսների անհետևողականությունը, իսկ շարժառիթները՝ անհրաժեշտ գրականության բացակայությունը կամ պակասը, ժամանակի սղությունը, թեմայի ոչ պատշաճ մատուցումը:

2. Ակադեմիական առաջադիմության սխալ գնահատում

Անարդարացի/սխալ գնահատմանը նպաստող գործոններն են սովորույթի/ավանդույթի ուժով գնահատումը, վերահսկողության ու հաշվետվողականության պակասը, ինչպես նաև այլոց նկատմամբ դրսևորված ենթադրյալ անարդարացի գնահատման դեմ պայքարի ոչ բավարար պատրաստակամությունը, իսկ շարժառիթները՝ ֆավորիտիզմը և ուսանողների վարձավճարներից ունեցած կախվածությունը:

3. Անհարկի միջամտություն պրոֆեսորադասախոսական կազմի անդամների աշխատանքի նշանակման, աշխատանքից ազատման և մասնագիտական առաջխաղացման վերաբերյալ որոշումների կայացման վրա

Պրոֆեսորադասախոսական կազմի անդամների աշխատանքի նշանակման, աշխատանքից ազատման և մասնագիտական առաջխաղացման վերաբերյալ որոշումների կայացման վրա ուսանողները շոշափելի ազդեցություն չունեն, սակայն վերջիններիս ձայնը լսելի է դառնում, երբ համախմբվում և դիրքորոշում են հայտնում: Հետազոտության մասնակցած ուսանողներն առհասարակ դասախոսների աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման և ծառայողական առաջխաղացման կարգերի առկայության կամ բացակայության մասին տեղյակ չեն:

4. Բուհերի քաղաքականացում

Ըստ հետազոտությանը մասնակցած ուսանողների՝ բուհերի քաղաքականացվածությունը սույն հետազոտության շրջանակներում բարեվարքության խախտման չորս դրսևորումներից ամենաքիչ տարածվածն է: Քաղաքականացմանը նպաստում են կուսակցականացված ուսանողական խորհուրդները, որոնք ինքնաբերաբար շարունակում են անել այն, ինչ անում էին 2018թ.-ի քաղաքական իրադարձություններից առաջ: Այդուհանդերձ, որոշակի կապ կա դասախոսի ծառայողական առաջխաղացման ու խրախուսման և վերջինիս քաղաքական հայացքների միջև:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ակադեմիական բարեվարքության յուրաքանչյուր խախտման վերաբերյալ հանդես կգանք առանձին առաջարկություններով: Առաջարկությունները խմբավորված են ըստ սույն հետազոտության մեջ ուսումնասիրված բարեվարքության խախտման առանձին դրսևորումների: Բոլոր առաջարկությունները վերաբերում են բուհերին և միայն մեկ դեպքում, է, որ առաջարկությունը վերաբերում է բուհերի հիմնադիրներին և լիազոր մարմնին, որի վերաբերյալ ստորև հստակ նշված է:

Հետազոտության արդյունքում արված են **առաջարկություններ** ՀՀ բուհերին և ՀՀ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (**ԿԳՄՍ)** նախարարությանը:

Առաջարկություններ ՀՀ բուհերին

1.Խաբեություն և գրագողություն

- Բուհերում «Մասնագիտական ներածություն» առարկայի շրջանակներում դասավանդել ակադեմիական գրագրության կանոնները և պահանջները, ներկայացնել գրագողության և խարդախության վտանգները.
- Սահմանել ակադեմիական գրագողության և խաբեբայության դեմ պայքարի ընթացակարգեր և դրանց համար կիրառվելիք պատասխանատվության միջոցներ՝ ընդհուպ մինչև բուհից հեռացում.
- Ստեղծել ակադեմիական էթիկայի կոմիտեներ.

- Ներդնել գրագողության դեմ պայքարի հավելված (Turn-it-in-ի օրինակով) կամ կազմակերպել ուսանողների ներկայացրած աշխատանքների ստուգում փակ գրախոսության (blind review) ձևաչափով.

2. Ակադեմիական առաջադիմության սխալ գնահատում

- Բուհերում մշակել առարկայի գնահատման հստակ չափանիշներ (rubric).
- Մասնատել առարկայի գնահատումը մի քանի մասերի, գնահատման մեթոդների շարքում դիտարկել անհատական և խմբային առաջադրանքների՝ էսսեների, իրավիճակային խնդիրների, հետազոտական աշխատանքների հանձնարարումը, որոնց համար՝ մշակել գնահատման կրեդիտային չափանիշներ.
- Բուհական քննասենյակներում ակադեմիական առաջընթացի գնահատումն իրականացնել մեկից ավել մասնագետների ներկայությամբ, այդ թվում՝ ապահովելով հրավիրյալ մասնագետի ներկայություն, վերջինիս ընտրությունը կատարելով համակարգչի միջոցով՝ պատահական ընտրության սկզբունքով.
- Ակադեմիական առաջընթացի գնահատման գործընթացում նեպոտիզմի և ֆավորիտիզմի երևույթները չեզոքացնելու նպատակով ներդնել քննող դասախոսների և հրավիրված մասնագետների կողմից շահերի բախման գրավոր կամ բանավոր հայտարարությունների գործիքը.

3. Անհարկի միջամտություն պրոֆեսորադասախոսական կազմի անդամների աշխատանքի նշանակման, աշխատանքից ազատման և մասնագիտական առաջխաղացման վերաբերյալ որոշումների կայացման վրա

- Բուհերում մշակել աշխատանքի ընդունման և պրոֆեսորադասախոսական թափուր հաստիքների տեղակալման հստակ չափորոշիչներ ու բարձրացնել գործընթացների թափանցիկությունը. աշխատանքի ընդունումը կազմակերպել բաց մրցույթային հիմունքներով և սահմանված չափորոշիչների կիրառմամբ, իսկ աշխատանքից ազատման որոշումների համար ապահովել պատշաճ հիմնավորվածության և որոշումների հրապարակայնություն.
- Բուհական անձնակազմի աշխատանքի խրախուսումը և ծառայողական առաջխաղացումը կազմակերպել չափելի հիմնական կատարողականի ցուցանիշների (KPI) հիման վրա.

Առաջարկություններ ՀՀ ԿԳՄՍ-ին

4. Բուհերի քաղաքականացում

- Օրենսդրորեն սահմանափակել բուհերի կառավարման բարձրագույն օղակներում քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև՝ կուսակցությունների կառավարման ղեկավար և վերահսկողական մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց ներգրավվման հնարավորությունները.
- Բուհերի ուսանողական խորհուրդների ձևավորման գործընթացում սահմանափակել քաղաքական կողմնորոշում և կուսակցական պատկանելիություն ունեցող ուսանողների ներգրավումը.
- Բուհերի կառավարման ու ուսանողական խորհուրդների անդամների, ինչպես նաև՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար սահմանել քաղաքական

զսպվածության և չեզոքության պահանջներ ու սահմանափակումներ, դրանց կիրարկման ընթացակարգեր. դրանց չկատարման կամ խախտման համար նախատեսել վարչական և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Առաջարկվում է նաև վերոգրյալ բոլոր առաջարկությունների կյանքի կոչման գործում հնարավորության դեպքում ներառել նաև ուսանողներին՝ առավելագույնս հաշվի առնելով նաև վերջիններիս կարծիքներն ու ընկալումները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀՀ Օրենքներ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2005.01.31/8(380) Հոդ.159.
https://www.arlis.am/documentview.aspx?docid=25820

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների պաշտոնական փաստաթղթեր

ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար, Երևանի պետական համալսարանի գործունեությունը 2019/2020 ուսումնական տարում Երևան 2020
http://documentation.ysu.am/wp-content/uploads/2021/09/Rektori_zekuyts_2020.pdf

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի 2019/2020թթ. գործունեության հաշվետվություն, https://polytech.am/shared-files/37671/2019-2020%D5%A9%D5%A9%E2%80%A4-%D5%80%D4%B1%D5%8A%D5%80-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf

Հյուսիսային համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Նաիրուհի Սարգսյան, Հյուսիսային համալսարանի 2017-2018 ուստարվա գործունեության հաշվետվություն https://northern.am/images/HASHVETVUTYUNNER/PROREKTOR--17-18.pdf

ՀՊՏՀ 2020թ.-ի գործունեության հաշվետվություն
https://asue.am/upload/files/reports/report-2020.pdf

Շիրակի պետական համալսարան, Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի 2019-2020 ուստարվա գործունեության հաշվետվություն http://shsu.am/media/quality/vorak-hashvetvutyun-2019-2020.pdf

Որակի էստոնական գործակալություն, Երևանի Հայբուսակ համալսարանի համար հաշվետվություն
http://www.anqa.am/media/3179/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A2%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%AF-%D6%83%D5%B8%D6%80%D5%B1%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81-2019.pdf

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, 2020թ.-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ,
https://old.vsu.am/xar@/%D5%8E%D5%8A%D5%80-%D4%B3%D4%B1%D5%91-2020%20%D5%A9-----21.04.21.pdf

Ակադեմիական գրականություն

Միխայլո Միլովանովիչ, «Կոռուպցիայի դեմ պայքարը և բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթական ոլորտում», համահեղինակներ՝ Իվանա Սեներիկ (կրթության քաղաքականության հարցերով անկախ խորհրդատու), Մերի Ավետիսյան («Էդմոն Սաֆրա» էթիկայի կենտրոնի գիտաշխատող), Տատյանա Խավանսկա (կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով ավագ խորհրդատու), խորհրդատու՝ Յան Ութման, կենտրոնի խորհրդատվական խորհրդի նախագահ: «Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան» կազմակերպության պատվերով:

Bretag, T., Mahmud, S., Wallace, M., Walker, R., McGowan, U., East, J., ... & James, C. (2014). 'Teach us how to do it properly!'An Australian academic integrity student survey. *Studies in higher education*, *39*(7), 1150-1169.

Chowdhury, F. (2018). Grade Inflation: Causes, Consequences and Cure. Journal of Education and Learning, 7(6), 86-92.

Gottardello, D., Pàmies, M., & Valverde, M. (2017). Professors' perceptions of university students' plagiarism: A literature review. *BID: Textos universitaris de biblioteconomia i documentació*, *39*(diciembre),

Hallak, J., & Poisson, M. (2007). Corrupt schools, corrupt universities: What can be done?. Paris: International Institute for Education Planning.

Hussain, Fiaz, and Adnan Riaz Fiaz Hussain Adnan Riaz. "Corruption in the public organizations of Pakistan: Perceptual views of university students." The Journal of Commerce 4, no. 1 (2012): pp. 66-67.

Mahmud, S., Bretag, T., & Foltýnek, T. (2019). Students' perceptions of plagiarism policy in higher education: A comparison of the United Kingdom, Czechia, Poland and Romania.*Journal of Academic Ethics*, *17*(3), 271-289.

Mungiu-Pippidi, A., & Dusu, A. E. (2011). Civil society and control of corruption: Assessing governance of Romanian public universities. International Journal of Educational Development, 31(5), 532-546.

Nordin, M., Heckley, G., & Gerdtham, U. (2019). The impact of grade inflation on higher education enrolment and earnings. Economics of Education Review, 73.

Open Society Foundations Armenia (2016), Strengthening integrity and fighting corruption in education: Armenia, http://www.osf.am/wp-content/uploads/2017/01/Integrity-Report_ENG_PUBLISHED_16.01.2017.pdf

Sihombing, S. O. (2018). Youth perceptions toward corruption and integrity: Indonesian context. *Kasetsart Journal of Social Sciences*, *39*(2), p. 301.

Sihombing, S. O. (2018). Youth perceptions toward corruption and integrity: Indonesian context. *Kasetsart Journal of Social Sciences*, *39*(2)

Այլ կայքեր

ՀՀ Վիճակագրության պետական կոմիտե, Սոցիալ-ժողովրդագրական հատված, 5.17. Բարձրագույն կրթությունը 2019/2020 ուսումնական տարում, https://armstat.am/file/article/sv_03_20a_5170.pdf

Hofstede insights, compare countries, available at https://www.hofstede-insights.com/product/compare-countries/

Surveysystem, https://www.surveysystem.com/sscalc.htm?fbclid=IwAR3SnIg8_Mjp_tnunF4jx8y5AJjfJiwIGaz5vzKF45bxk46n2z5kZLvVqXU

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Անանուն հարցման հարցաշար

1. Խնդրում ենք նշել Ձեր տարիքը:
   - Մինչև 18
   - 18-25
   - 25-35
   - 35-55
   - 55 և բարձր

2. Խնդրում ենք նշել Ձեր սեռը
   - Արական
   - Իգական

3. Խնդրում ենք նշել թե կրթական ո՞ր աստիճանի ծրագրում եք սովորում
   - Բակալավրիատ
   - Մագիստրատուրա
   - Ասպիրանտուրա
   - Դոկտորանտուրա

4. Խնդրում ենք նշել Ձեր միջին որակական գնահատականը (GPA): Եթե չեք հիշում տառային համարժեքը խնդրում ենք գրել թվով (օրինակ՝ 20 բալանոց համակարգում 14.5 կամ 100 բալանոց համակարգում 81 կամ 4 բալանոց համակարգում 3.3):
   - A+
   - A
   - A-
   - B+
   - B
   - B-
   - C+
   - C
   - C-
   - D

5. Ո՞ր բուհում եք սովորում

6. Ռեֆերատներ, կուրսային, դիպլոմային կամ ակադեմիական այլ աշխատանքներ գրելիս ի՞նչ դժվարություններ եք ունենում
   - Ժամանակի սղություն
   - Անհրաժեշտ գրականության բացակայություն
   - Թեմայի բարդություն, անհստակություն
   - Դժվարություններ չեմ ունենում
   - Դժվարանում եմ պատասխանել

7. Երբևէ եղել է, որ դժվարությունների հանդիպելիս փորձեք օգտագործել պատրաստի աշխատանքներ կամ դիմեք մեկ ուրիշին, որ աշխատանքը գրի ձեր փոխարեն:

- Այո
- Ոչ

8. Ձեր բուհում արդյո՞ք տարածված են ռեֆերատներ, կուրսային, դիպլոմային կամ ակադեմիական այլ աշխատանքներ ձեռք բերելու ավանդույթները:

- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

9. Եթե նախորդ՝ 8-րդ հարցին պատասխանել եք «այո», ապա այդպիսի քանի՞ դեպքից եք տեղյակ:

- Միայն մեկ
- 1-ից 6
- 6-10
- Ավելի քան 10
- Մեր բուհում կուրսային, դիպլոմային կամ ակադեմիական այլ աշխատանքներ ձեռք բերելը համատարած բնույթ է կրում

10. Ձեզ համար ընդունելի՞ է, երբ ուսանողն իր աշխատանքում, առանց պատշաճ հղման օգտագործում է ուրիշի մտքերը, գաղափարները կամ գիտական նորույթները:

- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

11. Ի՞նչ միջոցներ կձեռնարկեք, եթե իմանաք, որ Ձեր դասընկերը ձեռք է բերել իր աշխատանքը մեկ ուրիշից

- Կփորձեմ բացատրել, որ ակադեմիական աշխատանք գրելը ուսանողի կրթական որակների բարձրացմանն է ուղղված և պետք է կատարել այն ինքնուրույն
- Կնախատեմ ու կասեմ, որ սխալ է վարվել
- Կնախատեմ և կձգտեմ այլևս իր հետ չառնչվել
- Չեմ նախատի, սակայն կփոխեմ կարծիքս իր կատարած աշխատանքների մասին
- Այդ մասին կտեղեկացնեմ բուհի համապատասխան աշխատակիցներին (ամբիոնի վարիչ, փոխդեկան, դեկան և այլն):
- Ոչ մի քայլ էլ չեմ ձեռնարկի, քանի որ դա իմ գործը չէ
- Դրա մասին կխոսեմ հրապարակային (օրինակ՝ սոցիալական ցանցերում պատասխանատու պաշտոնյաներին հասցեագրված բաց նամակի միջոցով)
- Կխրախուսեմ, քանի որ, եթե կարողացել է անել ու «ջրից չոր դուրս գալ», ապա լավ է արել, հիանալի է:

12. Ի՞նչ միջոցներ կձեռնարկեք, եթե իմանաք, որ Ձեր համալսարանի դասախոսը իր ակադեմիական արտագրել է աշխատանքը ուրիշից:

- Կփորձեմ բացատրել, որ դասախոսն իր ուսանողներին պետք է օրինակ ծառայի և ակադեմիական աշխատանքը պետք է կատարել ինքնուրույն
- Կնախատեմ ու կասեմ, որ սխալ է վարվել

- Կնախատեմ և կնգտեմ այլևս իր հետ չառնչվել
- Չեմ նախատի, սակայն կփոխեմ կարծիքս իր կատարած աշխատանքների մասին
- Այդ մասին կտեղեկացնեմ բուհի համապատասխան աշխատակիցներին (ամբիոնի վարիչ, փոխդեկան, դեկան և այլն):
- Այդ մասին նամակով կտեղեկացնեմ ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեին
- Ոչ մի քայլ էլ չեմ ձեռնարկի, քանի որ դա իմ գործը չէ
- Դրա մասին կխոսեմ հրապարակային (օրինակ՝ սոցիալական ցանցերում պատասխանատու պաշտոնյաներին հասցեագրված բաց նամակի միջոցով)
- Կխրախուսեմ, քանի որ, եթե կարողացել է անել ու «ջրից չոր դուրս գալ», ապա լավ է արել, հիանալի է:

13. Ի՞նչ միջոցներ կձեռնարկեք, եթե իմանաք, որ Ձեր համալսարանի դասախոսը մեծամասամբ արտագրել է իր թեկնածուական կամ դոկտորական ատենախոսությունը:

- Կփորձեմ ու կասեմ, որ սխալ է արել
- Կնախատեմ՝ մատնանշելով իր արարքի անարդարացիությունը
- Կնախատեմ և կնգտեմ այլևս իր հետ չառնչվել
- Չեմ նախատի, սակայն կնգտեմ այլևս իր հետ չառնչվել
- Այդ մասին կտեղեկացնեմ բուհի համապատասխան աշխատակիցներին (ամբիոնի վարիչ, փոխդեկան, դեկան և այլն):
- Այդ մասին նամակով կտեղեկացնեմ ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեին
- Ոչ մի քայլ էլ չեմ ձեռնարկի, քանի որ դա իմ գործը չէ
- Դրա մասին կխոսեմ հրապարակային (օրինակ՝ սոցիալական ցանցերում պատասխանատու պաշտոնյաներին հասցեագրված բաց նամակի միջոցով)
- Կխրախուսեմ՝ կարծելով, որ եթե կարողացել է անել ու «ջրից չոր դուրս գալ», ապա լավ է արել, հիանալի է:

14. Խնդրում ենք 1-10 սանդղակով գնահատել Ձեր համալսարանում գրագողության տարածվածության աստիճանը (1՝ առհասարակ տարածված չէ, 10՝ լայնորեն տարածված է):

15. Որքանո՞վ են արդար գնահատում դասախոսները Ձեր համալսարանում:

- Մշտապես արդար են գնահատում
- Որպես կանոն արդար են գնահատում
- Մեծ մասամբ անարդար են գնահատում
- Շատ անարդար են գնահատում

16. Ի՞նչ կանեք, եթե համարեք, որ դասախոսը Ձեզ անարդարացիորեն ցածր է գնահատել (կարող եք ընտրել մեկից ավելի տարբերակներ):

- Կդիմեմ ուսանողական խորհրդին
- Այդ մասին կտեղեկացնեմ բուհի ներսում համապատասխան պաշտոնյաներին (ամբիոնի վարիչ, փոխդեկան, դեկան և այլն), իսկ անհրաժեշտության դեպքում նաև բուհի կառավարման (հոգաբարձուների խորհրդին)
- Իմ զայրույթն ու բողոքը կարտահայտեմ սոցիալական ցանցերում
- Կփորձեմ գտնել այնպիսի մարդու, որը կմիջնորդի, որ բարձրացնեն գնահատականս
- Այլ միջոցների կդիմեմ (խնդրում եմ մանրամասնեք)
- Ոչինչ էլ չեմ ձեռնարկի:

17. Ի՞նչ կանեք, եթե համարեք, որ դասախոսը անարդարացիորեն բարձր է գնահատել Ձեր դասընկերոջը (կարող եք ընտրել մեկից ավելի տարբերակներ)

- Կառարկեմ և անհարժեշտության դեպքում կհանդիմանեմ դասախոսին
- Այդ մասին կտեղեկացնեմ բուհի ներսում համապատասխան պաշտոնյաներին (ամբիոնի վարիչ, փոխդեկան, դեկան և այլն), իսկ անհրաժեշտության դեպքում նաև բուհի կառավարման (հոգաբարձուների խորհրդին)
- Իմ զայրույթն ու բողոքը կարտահայտեմ սոցիալական ցանցերում
- Ոչինչ էլ չեմ ձեռնարկի, քանի որ կարծում եմ, որ դա ինձ չի վերաբերում
- Այլ միջոցների կդիմեմ (խնդրում եմ մանրամասնեք)

18. Ի՞նչ կանեք, եթե համարեք, որ դասախոսը անարդարացիորեն ցածր է գնահատել Ձեր դասընկերոջը (կարող եք ընտրել մեկից ավելի տարբերակներ):

- Կհորդորեմ, որպեսզի դասընկերս դիմի ուսանողական խորհրդին
- Կհորդորեմ, որպեսզի դասընկերս դիմի բուհ-ի համապատասխան պաշտոնյաներին (ամբիոնի վարիչ, փոխդեկան, դեկան և այլն)
- Ինքս կդիմեմ ԲՈՒՀ-ի ուսանողական կամ ակադեմիական խորհրդին
- Ինքս կփորձեմ կարգավորել խնդիրը՝ բուհի համապատասխան պաշտոնյաների (ամբիոնի վարիչ, փոխդեկան, դեկան և այլն) հետ խոսելով
- Կառարկեմ ու անհրաժեշտության դեպքում կհանդգնեմ հանդիմանել տվյալ դասախոսին
- Ոչինչ էլ չեմ ձեռնարկի, քանի որ կարծում եմ, որ դա ինձ չի վերաբերում

19. 1-10 սանդղակով գնահատեք ԲՈՒՀ-ում դասախոսների կողմից ուսանողներին սուբյեկտիվ ու կամայական գնահատման տարածվածության աստիճանը (1՝ առհասարակ տարածված չէ, 10՝ լայնորեն տարածված է):

20. 1-10 սանդղակով գնահատեք ԲՈՒՀ-ում պրոֆեսորադասախոսական պաշտոններում աշխատանքի ընդունման գործընթացի արդարացիությունը (1՝ շատ արդարացի է, 10՝ ծայրաստիճան անարդարացի է):

21. 1-10 սանդղակով գնահատեք, թե ԲՈՒՀ-ում աշխատակիցների ծառայողական առաջխաղացման հնարավորությունները որքանո՞վ են արդարացի (1՝ շատ արդարացի է, 10՝ ծայրաստիճան անարդարացի է):

22. Ի՞նչ միջոցներ կձեռնարկեք, եթե փաստեր ունենաք առ այն, որ, այսպես կոչված, «խնամի-բարեկամ-ծանոթ» կապերն օգտագործելով կամ էլ կաշառքով պաշտոններ են ստանում Ձեր ԲՈՒՀ-ում (կարող եք ընտրել մեկից ավելի տարբերակներ):

- Այդ մասին կփորձեմ խոսել ռեկտորի, կամ առնվազն, դեկանի հետ
- Կհանրայնացնեմ փաստերը, այդ թվում՝ նաև սոցիալական ցանցերով
- Փաստերը կներկայացնեմ դասընկերներիս ուշադրությունը
- Փաստերը կներկայացնեմ ուսանողական խորհրդին
- Կդիմեմ ոլորտի լիազոր մարմնին (ՀՀ ԿԳՄՍ նախարարություն)
- Կդիմեմ իրավապահ մարմիններին
- Ոչինչ էլ չեմ անի, քանի որ կարծում, եմ, որ դա ինձ չի վերաբերում

23. Ձեր դասախոսը երբևէ դասի ժամանակ հորդորե՞լ ընտրությունների ընթացքում քվեարկել կամ չքվեարկել որևէ քաղաքական ուժի, համալրել որևէ կուսակցության շարքերը կամ մասնակցել որևէ հանրահավաքի կամ կուսակցության նախաձեռնության:

- Այո
- Ոչ

24. 1-10 սանդղակով գնահատեք, թե որքան հաճախ են դասախոսները քաղաքական կոչերով կամ հայտարարություններով հանդես գալիս դասի ժամանակ (1՝ երբեք, 10՝ չափազանց շատ):

25. Ձեր բուհում դասախոսները ուսանողներին գնահատելիս վերջիններիս քաղաքական հայացքները (կուսակցական պատկանելությունը) հաշվի առնու՞ մ են:

- Այո
- Մասամբ այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

26. Արդյո՞ք նշանակություն ունեն անհատի քաղաքական հայացքները (կուսակցական պատկանելությունը) Ձեր ԲՈՒՀ-ում աշխատանքի ընդունվելիս:

- Այո
- Մասամբ այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

27. Արդյո՞ք նշանակություն ունեն անհատի քաղաքական հայացքները (կուսակցական պատկանելությունը) Ձեր բուհում բարձր պաշտոններ ստանալիս (ամբիոնի վարիչ, փոխդեկան, դեկան, պրոռեկտոր, ռեկտոր):

- Այո
- Մասամբ այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

28. Ի՞նչ կանեք, եթե Ձեզ բուհում քաղաքական հայացքների (կուսակցական պատկանելության) համար խտրականության ենթարկեն (կարող եք ընտրել մեկից ավելի տարբերակներ):

- Հրապարակավ, այդ թվում՝ նաև սոցիալական ցանցերի միջոցով այդ մասին կբարձրաձայնեմ
- Այլ բուհ կտեղափոխվեմ
- Կփորձեմ հարցը հստակեցնել բուհի ղեկավարության հետ
- Այլևս չեմ բարձրաձայնի իմ քաղաքական համոզմունքները
- Ոչինչ էլ չեմ անի ու կհամակերպվեմ

29. Ի՞նչ կանեք, եթե Ձեր դասընկերոջը բուհում քաղաքական հայացքների համար խտրականության ենթարկեն (կարող եք ընտրել մեկից ավելի տարբերակներ):

- Հրապարակավ, այդ թվում՝ նաև սոցիալական ցանցերի միջոցով այդ մասին կբարձրաձայնեմ

- Կհորդորեմ, որպեսզի վերջինս այլ բուհ տեղափոխվի
- Կփորձեմ հարցը հստակեցնել բուհի ղեկավարության հետ
- Կհորդորեմ, որպեսզի վերջինս չբարձրաձայնի իր քաղաքական համոզմունքների մասին
- Ոչինչ էլ չեմ անի ու կհամակերպվեմ

30. Ի՞նչ կանեք, եթե Ձեր դասախոսին բուհում քաղաքական հայացքների (կուսակցական պատկանելության) համար խտրականության ենթարկեն (կարող եք ընտրել մեկից ավելի տարբերակներ):

- Հրապարակավ, այդ թվում՝ նաև սոցիալական ցանցերի միջոցով այդ մասին կբարձրաձայնեմ
- Կհորդորեմ, որպեսզի վերջինս այլ բուհ տեղափոխվի
- Կփորձեմ հարցը հստակեցնել բուհի ղեկավարության հետ
- Կհորդորեմ, որպեսզի վերջինս չբարձրաձայնի իր քաղաքական համոզմունքների մասին
- Ոչինչ էլ չեմ անի ու կհամակերպվեմ

31. Հաշվի առնելով ձեր հնարավորությունները, ի՞նչ ջանքեր կներդնեք ԲՈՒՀ-ում արդար, թափանցիկ և հավասար հարաբերություններ հաստատելու համար:

32. Ինչ է հարկավոր անել՝ կանխելու առանձին արատավոր դրսևորումները՝ գրագողությունը ուսանողների շրջանում, գրագողությունը դասախոսների շրջանում, անարդարացի գնահատումը, դասախոսների անարդարացի առաջխաղացումը և բուհերի քաղաքականացումը:

Հավելված 2. Ֆոկուս-խմբային քննարկման հարցաշար

1. Եթե ակադեմիական բարեվարքությունը սահմանենք որպես ուսումնառության, դասավանդման և գիտակրթական գործունեության իրականացում մասնագիտական էթիկայի՝ մասնագիտական վարվելակերպի սկզբունքներին և բարոյական վարքագծի կանոններին համապատասխան ակադեմիական աշխատանք գրելը, ապա ի՞նչ եք կարծում արդյո՞ք Ձեր բուհերում ակադեմիական բարեվարքությանը բավարար ուշադրություն դարձվո՞ւմ է:
2. Եթե գրագողությունը սահմանենք որպես ուրիշի ստեղծագործությունից մտքեր, հատվածներ քաղելը առանց դրանց ստեղծագործական վերամշակման և առանց ձեռքբերման սկզբնաղբյուրի նշման և որպես իրենը ներկայացնելը կամ ստեղծագործությունն ամբողջությամբ իր անունով ներկայացնելը, Ըստ Ձեզ ուսանողների շրջանում արդյո՞ք կա այն ընկալումը, որ գրագողությունը մերժելի երևույթ է: Եթե ոչ, ապա ինչու՞:
3. Եթե Ձեր համալսարանում ձևավորվի ակադեմիական բարեվարքությունը վերահսկող որևէ մարմին (օրինակ՝ ակադեմիական բարեվարքության կոմիտե) կցանկանա՞ք որպես ուսանող դրան մասնակցել: Ի՞նչ եք կարծում ուսանողները հետաքրքրված կլինե՞ն մասնակցել այդպիսի կոմիտեի աշխատանքներին:
4. Եթե արդար գնահատումը սահմանենք որպես գնահատելիս երկակի ստանդարտների բացառում և միատեսակ մոտեցման կիրառում, ապա Ձեր կարծիքով արդյո՞ք դասախոսները գնահատելիս պահպանում են արդարության սկզբունքը: Եթե ոչ, ապա, որոնք են այն սուբյեկտիվ գործոնները, որ անդրադառնում են գնահատման արդարացիության վրա:
5. Ձեր կարծիքով ուսանողների համար քննության կազմակերպման ո՞ր տարբերակն է առավել նախընտրելի. համակարգչային-թեստային, երբ համակարգիչն է գնահատում թեստի արդյունքները թե՞ ավանդական, երբ դասախոսն է գնահատում բանավոր կամ գրավոր քննությունը: Ձեր կարծիքով արդյո՞ք ուսանողի նախընտրությունը կապված է վերջինիս առաջադիմության հետ:
6. Ձեր կարծիքով ինչպիսի՞ն է ուսանողների վերաբերմունքը պրոֆեսորադասախոսական կազմի անդամների աշխատանքի նշանակման, աշխատանքից ազատման և մասնագիտական առաջխաղացման գործընթացի արդարացիության վերաբերյալ:
7. Ձեր կարծիքով հայկական բուհական համակարգում ուսանողներին գնահատելիս, հնարավորության դեպքում անվանական կրթաթոշակ, ուսման վարձի զեղչ կամ կրթական մրցանակ շնորհելիս ի՞նչ դեր ունեն վերջիններիս քաղաքական հայացքները:
8. Ձեր կարծիքով հայկական բուհական համակարգում դասախոսների առաջխաղացման գործում ի՞նչ դեր ունեն վերջիններիս քաղաքական հայացքները:
9. Ձեր կարծիքով ինչ է հարկավոր անել բուհերում գրագողությունը, անարդարացի գնահատումները ու առաջխաղացումները և, վերջապես, քաղաքականացումը (կուսակցականացումը վերջնականապես արմատախիլ անելու համար):